20 ՅՈՒՆԻՍ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 111(4963)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Թուրգութ Օզալին ադրբեջանցի է սպանել. ո՞ւմ պատվերով

**Vesti.az-ը, հղում անելով թուրքական ԶԼՄ-ներին, գրում է, որ 1998 թ. 34 TG 245 պետհամարանիշի ավտոմեքենայով Թուրքիայի ութերորդ նախագահի այրու՝ Սամրե Օզալի առանձնատուն է ներկայացել ոմն Շահրիյար Փուրնովրուզ եւ տեսակցություն խնդրել: Քանի որ այդ պահին Օզալի այրին բացակայել է, անծանոթը պահակակետում է թողել նրան հասցեագրած մի երկտող. «Թուրգութ Օզալը սպանվել է Glikonorinaid պրեպարատով: Մարդասպանը գտնվում է Ադրբեջանում, նրան կոչում են Հասան Ալիօղլու»: Անծանոթը թողել է նաեւ հյուրանոցային այս հասցեն՝ Erciyes Otel, Beyazit. Sehriyar Purnovruz, 5179185:**

**Սամրե Օզալը, ծանոթանալով երկտողին, հիշյալ հասցեով մարդ է ուղարկել, սակայն Փուրնովրուզին գտնել չի հաջողվել: Թուրքիայի մաքսային ծառայությունը հերքել է այդ անունով մարդու՝ երկիր ժամանելու փաստը, իսկ ոստիկանությունը չի կարողացել հայտնաբերել վերոհիշյալ պետհամարանիշի ավտոմեքենան:**

**Այդուհանդերձ, Թուրգութ Օզալի՝ թունավորման միջոցով սպանության վարկածը մնում է օրակարգում: Վերջերս Թուրքիայի պետական վերահսկողության հանձնաժողովը հանգել է եզրակացության, որ հանգուցյալ նախագահի աճյունը պետք է արտաշիրիմել եւ դատաբժշկական գործողություններ կատարել: Թուրքիայի նախագահ Գյուլն այդ առթիվ ընդունել է Օզալի որդուն՝ Ահմեդին:**

**Օզալի սպանության «ադրբեջանական» հետքի մասին տեղեկատվությունը չափազանց ուշագրավ է: Ինչպես հայտնի է, նա հանկարծամահ է եղել 1993 թ. ապրիլի 17-ին, երբ Ադրբեջանում ներքաղաքական իրավիճակը կտրուկ սրված էր: Սուրեթ Հուսեյնովը, կենտրոնանալով Գյանջայում, վերջնագիր էր ներկայացրել Ադրբեջանի ժողովրդական ճակատի կառավարությանը եւ նախագահ Էլչիբեյին:**

**Այդպիսի իրավիճակում Թուրքիայի դիրքորոշումը պետք է որ վճռորոշ լիներ Էլչիբեյի համար, քանի որ նա լիովին կողմնորոշված էր դեպի այդ երկիր: Բացահայտ փաստ է, որ Էլչիբեյին չէին ընդունում Մոսկվայում, իսկ Թեհրանը չէր թաքցնում նրա հանդեպ անբարյացակամությունը: Օզալը Էլչիբեյի հետ ուներ բարեկամական հարաբերություններ:**

**Ո՞ւմ կարող էր ձեռնտու լինել Օզալի մահը: Նրա ներքաղաքական մրցակիցներին եւ Ադրբեջանում Էլչիբեյի կառավարության տապալմամբ շահագրգիռ ուժերին: Վերջիններիս առաջնորդը Հեյդար Ալիեւն էր: Եվ եթե Օզալին թունավորողը գտնվել է Ադրբեջանում, ուրեմն նա կատարել է ինչ-որ մեկի պատվերը: Ինչ-որ մեկը կարող էր լինել Հեյդար Ալիեւը: «Երկրորդ հանրապետության վախճանը» գրքում Զարդուշտ Ալիզադեն պատմում է մի ուշագրավ դեպք: Օզալի թաղմանը Ադրբեջանից ներկա են գտնվել և՛ Էլչիբեյը, և՛ Հեյդար Ալիեւը:**

**Օդանավակայանում, երբ նրանք պետք է վերադառնային, Հեյդար Ալիեւը Էլչիբեյից թույլտվություն է խնդրել մի փոքր ուշանալու եւ Սուլեյման Դեմիրելի հետ առանձնազրույց ունենալու: Էլչիբեյը մերժել է, բայց խոսակցությանն անսպասելի միջամտել է Դեմիրելը եւ ասել, որ «երկու ծեր մարդ ուզում են մի փոքր շաղակրատել»: Էլչիբեյը ստիպված տեղի է տվել: Ալիզադեն կարծիք է հայտնել, որ հենց այդ ժամանակ էլ քննարկվել է Էլչիբեյին տապալելու եւ Հեյդար Ալիեւի վերադարձի ծրագիրը:**

**Եթե նկատի ենք ունենում, որ Դեմիրել-Ալիեւ առանձնազրույցը տեղի է ունեցել Օզալի թաղման արարողությունից անմիջապես հետո, իսկ Օզալին սպանողը գտնվել է Ադրբեջանում, ապա թերեւս պարզ է դառնում, թե ում մասն էր խառը Թուրքիայի նախագահի «հանկարծամահ լինելու» գործում:**

Վ. Ա.

# Մի բուռ «ուղերձներ» Օբամայից, Պուտինից, Օլանդից

*Կրկնությունը, ասում էին, գիտության մայրն է, ու կատակում՝ բթության էլ հայրը*



ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ռազմական ուժի օգտագործումը հակամարտության կարգավորման չի բերի, այլ միայն կերկարացնի տառապանքն ու աղետները, որոնց երկար ժամանակ ենթարկվում են տարածաշրջանում ապրող ժողովուրդները», ըստ ՌԴ նախագահի պաշտոնական կայքէջի, Լոս Կաբոսում G20-ի գագաթաժողովին մասնակցող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահներ Բարաք Օբաման (ԱՄՆ), Վլադիմիր Պուտինը (Ռուսաստան) եւ Ֆրանսուա Օլանդը (Ֆրանսիա) ղարաբաղյան հակամարտության առնչությամբ այսպիսի համատեղ հայտարարություն են ընդունել: Հայտարարությամբ նախագահներն ընդգծել են, որ «միայն բանակցային ճանապարհով խաղաղ կարգավորումը հնարավորություն կտա ելք գտնել ստեղծված իրավիճակից ու ապահովել տարածաշրջանի անվտանգ ապագան ու բարգավաճումը»:

*Տես էջ 3*

# Նալբանդյան. Ադրբեջանը մերժել ու մերժում է առաջարկները, «կոպտորեն խախտում է հրադադարը»

«Լոս Կաբոսում նախագահներ Վլադիմիր Պուտինի, Բարաք Օբամայի եւ Ֆրանսուա Օլանդի ընդունած հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ եռանախագահ երկրների ղեկավարների արդեն չորրորդ հայտարարությունն է, որը կարող է խթան հանդիսանալ բանակցային գործընթացի համար», ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների համատեղ հայտարարության առնչությամբ հայտարարություն է արել Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**՝ բարձր գնահատելով միջնորդների ջանքերը:

Նալբանդյանը վերահաստատել է Հայաստանի վճռականությունը՝ «եռանախագահ երկրների հետ միասնական հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը հասնելու առումով»: «Ադրբեջանը, ի տարբերություն Հայաստանի, մերժել եւ շարունակում է մերժել համանախագահ երկրների կողմից հրադադարի ռեժիմի ամրապնդմանն ուղղված առաջարկները՝ շփման գծից դիպուկահարների դուրսբերման, հրադադարի խախտումների, միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծման վերաբերյալ», նշել է Նալբանդյանը, շեշտելով, որ վերջին անգամ Ադրբեջանը նման կերպ է վարվել մեկ շաբաթ առաջ ԵԱՀԿ գործող նախագահի Բաքու այցելության ժամանակ: «Ադրբեջանը ոչ միայն մերժում է այդ առաջարկները, այլեւ կոպտորեն խախտում հրադադարը եւ շարունակաբար սադրանքներ կազմակերպում»:

Մինչդեռ, Նալբանդյանի խոսքերով, «Հայաստանը, ի տարբերություն Ադրբեջանի, բազմիցս հայտարարել է, որ պատրաստ է շարունակել բանակցությունները լ’Ակվիլայում, Մուսկոկայում, Դովիլում եւ, կարող եմ ավելացնել նաեւ, Լոս Կաբոսում համանախագահ երկրների ղեկավարների ընդունած հայտարարությունների հիման վրա՝ հասնելու հիմնախնդրի կարգավորմանը»:

Ա. Հ.

# 2 մլն դոլարից ավելի կբաշխվի 100 դիմումատուի

**Հայաստանի արդարադատության նախարարությունից տեղեկացնում են, որ Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներին ապահովագրական հատուցումների վճարման վերաբերյալ «Գլենդեյլ Նյուզ» (Glandale News) ամերիկյան թերթի տարածած հաղորդագրության առնչությամբ նախարարությունը ստացել է ԱՄՆ դատարանում գործը ներկայացրած փաստաբան Վարդգես Եղիայանի պարզաբանումը: Ըստ այդմ՝ ապահովագրված հայերի ժառանգներին վճարվող հատուցումները ստանալու համար ներկայացված փաստաթղթերի եւ դիմումների քննության ընթացքում համապատասխան հանձնաժողովը ժամանակին որոշակի անճշտություններ է թույլ տվել, ուստի գործով զբաղվող ամերիկահայ փաստաբանը դիմել է ԱՄՆ դատարան: Դատարանը գործն ուսումնասիրելուց հետո հանձնարարել է կատարել վճարումների վերահաշվարկ, խոսքը վերաբերում է միայն այն դիմումներին, որոնք արդեն բավարարել էր հանձնաժողովը: Այդպիսով՝ մոտ 2 176 587 ԱՄՆ դոլար կբաշխվի մոտ 100 դիմումատուի միջեւ, որանք այն դիմումատուներն են, որոնց վճարված հատուցումների հաշվարկման ժամանակ անճշտություններ են բացահայտվել նախկինում: Վ. Եղիայանը նաեւ նշել է, որ գործով չեն վերանայվելու հանձնաժողովի մերժած դիմումները:**

# Օսկանյանը՝ Գլենդեյլի իր տան մասին

**ԶԼՄ-ներից մեկը նյութեր էր հրապարակել ԲՀԿ պատգամավոր Վարդան Օսկանյանի՝ Լոս Անջելեսի (Գլենդեյլ) տան, դրա ձեռքբերման միջոցների վերաբերյալ հարցադրումներ անելով, թե տան ձեռքբերման ժամանակ Օսկանյանը Հայաստանի արտգործնախարար էր, եւ ուրեմն՝ որտեղի՞ց այդ կարգի գումար նրան: Օսկանյանը ֆեյսբուքի իր էջում հարկ է համարել այդ ուղղությամբ պարզաբանումներ տալ: Նա նախ ճշտել է, որ տունը 1996-ին չի գնել, այլ՝ 1988-ին, երկրորդ՝ 350 հազար դոլարով չի գնել, այլ՝ 500 հազարով: Ապա պարզաբանել է, որ Օսկանյան ընտանիքը Մարաշից սկսած երեք սերունդ ադամանդագործությամբ ու ոսկերչությամբ է զբաղվել՝ գործելով նախ Հալեպում, ապա ճյուղավորվել Լիբանան, Բելգիա եւ ԱՄՆ, ու 150 տարի ոսկերչությամբ զբաղվող եւ ոլորտում առաջատար դիրք գրավող ընտանիքը պիտի որ տարիների ընթացքում ինչ-որ բան կուտակած լիներ. «Իսկ էականն այն է, որ 1991-ից ես հենց այսպիսի կյանք եմ թողել բարեկեցիկ Ամերիկայում ու ընտանիքով տեղափոխվել եմ Հայաստան, որովհետեւ հավատացել եմ գաղափարի, ունեցել եմ նպատակ եւ երազ: Այսօր, հակառակ այս ամենին, ինձ մոտ ոչ մի բան չի փոխվել: Ես շարունակում եմ հավատալ, որ հնարավոր է կառուցել մեր երազած երկիրը: Ու եթե որեւէ բան այս ընթացքում փոխվել է, ապա միայն ավելի է ամրապնդել այս երազանքը», նշել է Օսկանյանը:**

Մ. Խ.

# Առկա քաղաքական ստատուս քվոն բոլորին առայժմ ձեռնտու է

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Այս խորհրդարանն ու այս կառավարությունն, իսկապես, ժամանակավորի դաջ ունեն իրենց ճակատներին, ու ոչ ոք չի կարող 100 տոկոսով պնդել, որ նոր խորհրդարանի պատգամավորները ու նոր նշանակված նախարարները նախագահական ընտրություններից հետո կլինեն այնտեղ, որտեղ են: Քանի որ նախագահ Սարգսյանն այս խորհրդարանական ընտրություններին ռիսկի չգնաց եւ մեծ հաշվով չփոխեց առկա քաղաքական ստատուս քվոն (տոկոս ավել-տոկոս պակաս խորհրդարանում՝ նշանակություն չունի, անգամ ՀԱԿ-ի խորհրդարան անցնելն առկա քաղաքական գծագրի արտացոլումն է), եւ նախարարներին նշանակելիս էլ մեծ ռիսկերի չգնաց: Ընդհակառակը, ասենք, Արմեն Գեւորգյանի լիազորությունները նույնը թողնելով ու Գագիկ Բեգլարյանին պաշտոն տալով՝ նախագահական ընտրություններին ընդառաջ նախագահ Սարգսյանը կարող է իրեն ապահով զգալ տեղերում աշխատել կարողացող այդ մարդկանց ծառայություններն օգտագործելով: Սակայն դա չի նշանակում, որ նախագահը չի պատկերացնում հասարակությունում առկա փոփոխությունների մեծ պահանջը, եւ այն, որ հին մարդկանցով հնարավոր չէ նոր տիպի կառավարում:

Ինչպես եւ նախորդ խորհրդարանում՝ նորում էլ մեծ թիվ են կազմում գործարարները, ու նաեւ այն պատգամավորները, որոնք քվորում ապահովող կոճակը ճիշտ ժամանակին սեղմողներ են: Այսինքն՝ քաղաքական դաշտը նույնպես մեծ հաշվով և՛ խորհրդարանում, և՛ նրանից դուրս մինչեւ այժմ ձեւակերպված ստատուս քվոյի պատկերն ունի, որտեղ ամեն ինչ շարունակելու են որոշել ԲՀԿ եւ ՀՀԿ առաջնորդները, նշանակություն են ունենալու նրա՛նց որոշակիացումները եւ դիրքորոշումները:

*Տես էջ 3*

# Դիմակայել շոգին առանց թունավորումների



Ամռանը սննդային թունավորումներից խուսափելու համար առաջին հերթին պետք է օգտվել ճիշտ պայմաններում պահվող ու վաճառվող սննդամթերքից: Նորություն չէ, որ բարձր ջերմաստիճանի պայմաններում սննդամթերքը շուտ է փչանում, հետեւաբար պետք չէ գնել դրսում՝ հենց արեւի տակ վաճառվող սնունդը:

Առողջապահության նախարարության գլխավոր ինֆեկցիոնիստ **Արա Ասոյանը** երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ կրկին հիշեցրեց ամռանը ճիշտ սնվելու անհրաժեշտությունը: Թեեւ թունավորումների առումով հանրապետությունում սրված իրավիճակ չէ, եւ երեկվա դրությամբ, համենայն դեպս, Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում սննդային թունավորման դեպքեր չկային, այնուամենայնիվ Արա Ասոյանը խորհուրդ է տալիս պահպանել զգուշություն: Ըստ նրա՝ ամռանը նաեւ պետք է խուսափել դժվարամարս սննդամթերքից, ճարպերից, ավելի շատ օգտագործել բանջարեղեն ու մրգեր:

Իսկ հեղուկների վերաբերյալ գլխավոր ինֆեկցիոնիստը նշում է՝ նախ հարկավոր է խմել 1-1,5 լիտր հեղուկ, որն էլ պետք է լինի առանց աղի բաղադրության: «Օրինակ՝ ինքս գերադասում եմ մեր մրգահյութերը», ավելացնում է պարոն Ասոյանը:

Բացի բժշկի վերոնշյալ խորհուրդներից նաեւ յուրաքանչյուր ոք իր հերթին պետք է հետեւի իր շրջապատի հիգիենային՝ պահանջելով, որ խանութներում նույնպես պահպանեն հիգիենայի կանոնները: Հաճախ ենք ականատես լինում՝ ինչպես է վաճառողը վերցնում դրամը եւ հետո առանց ձեռնոցների կտրատում երշիկը կամ առհասարակ ձեռք տալիս վաճառվող սննդամթերքին: Նման երեւույթները համապատասխան տեսչությունների ուշադրության կենտրոնում լինելուց բացի՝ պետք է առաջ բերեն նաեւ հասարակական դժգոհության լայն ալիք: Եվ քաղաքացիներն էլ, ըստ Արա Ասոյանի, պետք է հասկանան, որ սննդամթերք նման վաճառողներից պարզապես պետք չէ գնել:

Ի. Պ.

# Մարմնավաճառության թեման ըստ մտավորականների

Մարմնավաճառությունն իսպառ կանխելն իրատեսական չի հնչում, բայց գոնե կարելի է այնպես անել, որ մարմնավաճառները չկանգնեն հասարակական վայրերում: Եթե նրանք տարիներ շարունակ կանգնում են մայրաքաղաքի հանրային վայրերում, ապա դա ձեռնտու է ոչ միայն մարմնավաճառներին, այլեւ նրանց, որոնք պետք է կանխեն երեւույթը:

Քանի որ օրենսդրական դաշտի եւ ոստիկանության վրա այս դեպքում հույս դնել չի լինում, ապա հասարակական վայրերում մարմնավաճառների կանգնելը պետք է կանխի հասարակությունն իր մոտեցմամբ ու վերաբերմունքով: Բայց մինչ քաղաքացիների մոտեցումներին անդրադառնալը՝ երեկ ասուլիսի ժամանակ Տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար **Ռուբեն Բաբայանը** մեջբերեց Նյու Յորքի փորձը, որտեղ քաղաքապետի հետեւողական աշխատանքի շնորհիվ քաղաքի հասարակական վայրերում այլեւս մարմնավաճառների չեք հանդիպի: Պարոն Բաբայանը վերջերս է վերադարձել Նյու Յորքից ու կարծում է՝ Հայաստանում էլ հետեւողական քայլեր են հարկավոր: Բայց առայժմ մեր փողոցներում կանգնող մարմնավաճառները հասարակական կարգը վերահսկողների համար շահեկան են, առաջին հերթին ֆինանսական առումով: «Իսկ մենք գիտենք, որ յուրաքանչյուր թաղամասի կարգ ու կանոնի համար կան պատասխանատու ոստիկաններ», ավելացնում է Ռուբեն Բաբայանը:

Իսկ մարմնավաճառների ու միասեռականների՝ հանրային վայրերում պտտվելու խնդրով անհանգստացած մտավորականներն ինչո՞ւ չեն հավաքվում ու դիմում ոստիկանություն: Ասուլիսի մյուս բանախոսը՝ ճարտարապետ **Լեւոն Իգիթյանը**, հարցին հարցով պատասխանեց. «Իսկ միասեռական մտավորականներ չկա՞ն»:

Հանրային վայրերից մարմնավաճառներին ու միասեռականներին դուրս բերելու համար բանախոսներն առաջարկում են նման վայրերում ավելացնել լուսավորությունը, դարձնել դրանք ավելի մարդաշատ ու նման տեղերում կազմակերպել ավելի շատ միջոցառումներ, որպեսզի մարմնավաճառներն ու միասեռականներն այդ մթնոլորտում իրենց զգան կաշկանդված ու անհարմար:

Ի. Պ.

# «Արարատբանկ»՝ աճ ցուցանիշներով

*Բանկը ծրագրում է մինչեւ 2014-ը դուրս գալ արժեթղթերի միջազգային շուկա*

**«Արարատբանկի» բաժնետերերի 5-րդ տարեկան ժողովը երեկ տեղի ունեցավ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում: Ժողովը բացեց բանկի խորհրդի նախագահ Բարսեղ Բեգլարյանը՝ ողջունելով բանկի բաժնետերերին, եւ խոսքը փոխանցեց ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանին:**

**ԿԲ նախագահը, կարեւորելով «Արարատբանկի» գործունեությունը, նշեց, որ այն իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում Հայաստանի բանկային համակարգում եւ վայելում թե՛ հաճախորդների, թե՛ բաժնետերերի վստահությունը: Արթուր Ջավադյանը տեղեկացրեց, որ բանկի ակտիվները վերջին տարում աճել են միջինը 45 տոկոսով, ինչը բանկային համակարգի միջին ցուցանիշից բարձր է: Վարկերի վերադարձելիության ցուցանիշով եւս «Արարատբանկը» լավագույն արդյունքն ունի՝ միայն 0,4 տոկոսը չի վերադարձվել: Բանկում ներդված ռիսկերի կառավարման մեխանիզմի առկայությունը, ըստ ԿԲ նախագահի, կարեւոր պայման է բանկի հետագա կայուն զարգացման համար: Նա նաեւ վկայակոչեց բանկի մասնաճյուղերի, պլաստիկ քարտերի թողարկման ծավալների եւ այլ ցուցանիշների աճը:**

**Արթուր Ջավադյանի ելույթից հետո «Արարատբանկի» տարեկան ժողովի մասնակիցներին ողջունեց Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Հայաստանում ներկայացուցիչ Վալերի Ռազլոգը: Նա ընդգծեց «Արարատբանկի» միջոցով ՎԶԵԲ-ի կողմից Հայաստանում իրագործված ծրագրերի ֆինանսավորումը եւ համոզմունք հայտնեց, որ համագործակցությունը կշարունակվի եւ կզարգանա:**

**Բանկի գործունեության 2011-ի արդյունքները ներկայացրեց վարչության նախագահ, գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանը: Համաձայն դրանց, անցյալ տարի բանկի ակտիվներն աճել են 39 տոկոսով, տրված վարկերը՝ գրեթե 52 տոկոսով, պարտավորությունները՝ 43 տոկոսով, ներգրաված ավանդները՝ մոտ 8 տոկոսով, ընդհանուր կապիտալը՝ 19,3 տոկոսով, հաճախորդների թիվը՝ մոտ 50 տոկոսով, պլաստիկ քարտերի ծավալները՝ 63,6 տոկոսով, մասնաճյուղերը 5-ով, հասնելով 38-ի, իսկ այս տարվա ընթացքում ավելանալով եւս 2-ով, հասնելով 40-ի: Բանկի մաքուր շահույթը 2011-ին կազմել է 2,2 մլրդ դրամ, աճելով 73 տոկոսով: Բանկի բաժնետերերին տեղեկացվեց, որ բանկի շահույթից 268 մլն դրամը նրանց կվճարվի որպես շահաբաժին:**

**Անցյալ տարվա հիշարժան իրադարձություններից Աշոտ Օսիպյանը նշեց Petrol Plus նոր համակարգի եւ VISA միջազգային վճարային համակարգի երկակի քարտերի ներդրումը, գերմանական Commerzbank-ի կողմից «Որակի գերազանցություն» եւ «Առեւտրի ֆինանսավորում» մրցանակների արժանանալը, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի ամենակտիվ թողարկող բանկ ճանաչվելը, միջազգային «Դայներզ կլաբ» մասնակցություն ստանալու թույլտվությունը եւ այլն:**

**Խոսելով 2012-ի բանկի գործունեության մասին՝ «Արարատբանկի» գործադիր տնօրենը հայտնեց, որ առաջին 5 ամիսների ցուցանիշով բանկի ակտիվներն աճել են 40 տոկոսով, բանկը ծրագրում է ակտիվացնել գյուղատնտեսության, փոքր բիզնեսի, միջազգային առեւտրի վարկավորումը: Արտահանողների համար 8 տոկոսով վարկ է նախատեսվում: Բացի այս ամենից, Աշոտ Օսիպյանը հայտնեց, որ մինչեւ այս տարի բանկը կթողարկի արժեթղթեր ներքին շուկայում, իսկ մինչեւ 2014-ը դուրս կգա արժեթղթերի միջազգային շուկա՝ Վարշավայի կամ Լոնդոնի բորսաների միջոցով:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ԼՈՒՐԵՐ

## Կառավարության ծրագիրն Ազգային ժողովում

**Երեկ Ազգային ժողովում տեղի ունեցավ ՀՀԿ խմբակցության նիստ, որին մասնակցում էր ՀՀԿ խմբակցության մեծամասնությունը: Նիստը կազմակերպչական խնդիրներ է քննարկել: Իհարկե, կազմակերպելու բան կա՝ այսօր կառավարությունը ներկայացնում է իր ծրագիրը, որի քվեարկությունը չպետք է խնդիրներ հարուցի: Քննարկվելու է նաեւ Սեւանա լճից ջուր վերցնելու նախագիծը, որը եւս միանշանակ չի ընդունվում: Ընտրվել է նաեւ ՀՀԿ խմբակցության նոր քարտուղար, դա, ինչպես եւ սպասվում էր, Գագիկ Բեգլարյանի փոխարեն օրերս մանդատ ստացած Հովհաննես Սահակյանն է: Ի դեպ, երեկ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանը ստորագրել է այն որոշումը, որով այսօր կսկվի հինգերորդ գումարման Ազգային ժողովի նստաշրջանն ու «Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» հարցի քննարկումը: Սակայն ամեն ինչ դրանով չի սահմանափակվելու, քանի որ մի այլ որոշմամբ արտահերթ նիստ էլ է գումարվելու՝ Հինգերորդ գումարման առաջին նստաշրջանի ավարտից հետո, որի օրակարգում մի շարք օրենքներ են, այդ թվում՝ Սեւանա լճից լրացուցիչ 150 մլն խմ ջուր վերցնելը թույլատրող օրենքը: Կառավարության հերթական նիստում որոշում էր կայացվել դիմել ԱԺ՝ գյուղատնտեսական նպատակներով Սեւանա լճից 150 մլն խորանարդ մետր ջուր վերցնելու համար, վարչապետն էլ ասել էր, որ արտակարգ իրավիճակ է ստեղծվել, եւ ջրի սակավության պատճառով վտանգված է Արարատյան դաշտի գյուղատնտեսական համալիրը:**

Ս. Խ.

## ՕԵԿ-ական Հովհաննես Մարգարյանը կրկին պատգամավոր դարձավ

**ԿԸՀ-ն երեկ որոշում է կայացրել նախարար դառնալու պատճառով լիազորությունները դադարեցրած ՕԵԿ-ական Սամվել Թադեւոսյանի փոխարեն ԱԺ պատգամավորի մանդատը հանձնել Հովհաննես Մարգարյանին: Մինչ այդ նաեւ ինքնաբացարկների դիմումների հիման վրա ուժը կորցրած են ճանաչվել Մարգարյանից առաջ ՕԵԿ ցուցակից Նելսոն Զուլոյանի, Դավիթ Կարապետյանի, Դիանա Գազիյանի գրանցումները:**

**Ավելի ուշ հայտնի դարձավ, որ հունիսի 19-ին «Օրինաց երկիր» կուսակցության քաղխորհրդի նիստում որոշվել է ՕԵԿ համամասնական ցուցակում տեղ գտած Նելսոն Զուլոյանին եւ Դավիթ Կարապետյանին երաշխավորել՝ գործադիր իշխանությունում որպես փոխնախարարներ աշխատելու համար:**

Ս. Խ.

## ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանին ընդունեց սփյուռքի նախարարը

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը երեկ ընդունել է ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանին: Հանդիպմանը ներկա են եղել ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության նախկին տնօրեն, Հայաստանի Ամերիկյան համալսարանի փոխնախագահ Աշոտ Ղազարյանը եւ ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հովիկ Յորդեկյանը:

Ողջունելով հյուրերին՝ Հ. Հակոբյանը ներկայացրել է նախարարության ծրագրերը: ՀԲԸՄ նախագահ Պ. Սեդրակյանն իր հերթին ներկայացրել է միության ծրագրերը՝ հատուկ ընդգծելով տաղանդավոր հայ երիտասարդների աջակցության նախագծերը, նշելով, որ արդեն գործարկվել է Հայկական վիրտուալ համալսարանի թուրքերեն տարբերակը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են սփյուռքի հայկական դպրոցների, արեւմտահայերենի ուսուցման վիճակի, հայ երեխաների ու պատանիների Հայաստան ուղեւորությունների եւ Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ հարցեր:

Ս. Ս.

# Աջակցել սիրիահայերին. կոչ մտավորականներից

Հրապարակախոս **Կարինե Հակոբյանը**, երգահան **Վահան Արծրունին**, երաժշտագետ **Մարգարիտ Թախտաջյանը**, նկարիչ **Զարուհի Մուրադյանը**, ճարտարապետ **Շողիկ Ամիրխանյանը**, երգահան **Լիլիթ Պիպոյանը**, գրող-հրապարակախոս **Արթուր Անդրանիկյանը** հայտարարության տեքստ են տարածել, որտեղ կոչ են անում ստեղծել Սիրիահայերի աջակցության համակարգման խորհուրդ:

Նրանք անհրաժեշտ են համարում նաեւ արագ արձագանքման խորհրդի ստեղծումը, որտեղ բացի Հայաստանի պետական կառույցներից կընդգրկվեն Հայ առաքելական եկեղեցու, «Հայաստան» համահայկական հիմնադրամի եւ Սփյուռքում գործող կուսակցությունների ներկայացուցիչներ:

Մտավորականների ներկայացմամբ՝ խնդիրներից մեկը, որը շտապ լուծման կարիք է զգում, դեպի Սիրիա «Արմավիայի» չվերթերի վերականգնումն է: Մարգարիտ Թախտաջյանի ներկայացմամբ արդեն 1554 սիրիահայ է ոստիկանության վիզաների վարչություն դիմում ներկայացրել՝ ՀՀ-ում բնակություն հաստատելու համար:

Սիրիահայերի վիճակին եւ Հայաստան գալու խնդիրներին «**Ազգ**» օրաթերթն առավել մանրամասն կանդրադառնա առաջիկա համարներից մեկում:

Հ. Հ.

# Ուղղում

Հունիսի 19-ին մեր թերթում տպագրված Բրունո Սկապինի. «Հուշարձանների եւ որմնանկարների վերականգնման ծրագիրը առանձնահատուկ կարեւորություն ունի Հայաստանի համար» վերտառությամբ հոդվածում ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արեւ Սամուելյանի փոխարեն գրվել է Արեգ Սամուելյան: Ներողամտություն ենք հայցում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# Կարեն Կարապետյանը ո՞ւմ նվիրաբերեց իր աշխատավարձը

Երեկ «Տաշիր» բարեգործական հիմնադրամը դրամական պարգեւներ հանձնեց հանրապետության 6 մանկատների 30 սաների: Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավար Արսակ Ճաղարյանը, խոսելով բարեգործական ծրագրի մասին, նշեց. «Լինելով ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար՝ անցած երեք տարիներին Կ. Կարապետյանը իր աշխատավարձը ուղղել է հանրապետության մանկատների շրջանավարտների աջակցությանը եւ այս բարեգործական ծրագիրը իրականացվում է չորրորդ անգամ»: «Աշխատակազմի ղեկավար եղած ժամանակ աշխատավարձային փոխանցված գումարներին հավելվել են «Տաշիր» բարեգործական հիմնադրամի միջոցներից, եւ այսօր 6 մանկատների 30 շրջանավարտների համար հաշիվներ են բացվել, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 300.000 դրամ գումար: Կարապետյանների ընտանիքը հույս ունի, որ այս գումարը կնպաստի, որպեսզի երեխաների հասարակությանը ինտեգրվելու գործընթացն ավելի դյուրին լինի, ինչպես նաեւ իրենց առաջին ինքնուրույն քայլերում զերծ մնան կաշկանդվածությունից»:




«**Ազգ**»-ը զրուցեց նաեւ Գավառի մանկատան փոխտնօրեն Համլետ Բեսարյանի հետ. «Շրջանավարտների համար դրամական այս պարգեւը շատ կարեւոր է եւ կյանք մտնելու ճանապարհին շատ մեծ խթան կհանդիսանա: Մեր մանկատնից 6 շրջանավարտ է ստանում դրամական պարգեւ, որոնցից երեքն արդեն ընդունվել են բուհ, իսկ մյուս երեքը գնալու են կենսաբանական ընտանիք»: Անդրադառնալով երեխաների կացության խնդրին՝ մանկատան փոխտնօրենն ասաց, որ նրանք մինչեւ իրենց կյանքի վերջ երեխաներին հետեւում եւ աջակցում են, իսկ պետությունն էլ հատկացնում է մեկսենյականոց բնակարաններ:

Գավառի մանկատան սաներից Քոչարյան Սոնան, որը նաեւ պարգեւատրվեց 300. 000 դրամ գումարով, մեզ հայտնեց, թե ինչի վրա է ցանկանում ծախսել այդ գումարը. «Ցանկանում եմ համակարգիչ գնել, քանի որ մեծ ցանկություն կա լրագրող դառնալու, եւ գումարն այդպես ծախսել, ըստ իս, խելացի քայլ կլինի»: Թե որն է պատճառը, որ Սոնան ցանկանում է լրագրող դառնալ, ասաց. «Շատ եմ սիրում հեռուստատեսությունը եւ աշխարհին ասելիք ունեմ»: Սոնան ընդունվել է ՀՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը, որից հետ կտեղափոխվի լրագրության բաժին:

Իրենց հերթին, «ՍՕՍ-Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն Աշոտ Քոչարյանը եւ «Թռչունյան տուն» մանկատան տնօրեն Սոնա Սիմոնյանը բարձր գնահատեցին Կարապետյանների նման նախաձեռնությունները՝ նշելով, որ մանկատների շրջանավարտների համար այս գումարները բավականին զգալի ու կարեւոր աջակցություն են: Նման բովանդակությամբ նամակ է հղել Կ. Կարապետյանին «Զատիկ» մանկատան տնօրենը, նշելով, որ մանկատան երեխաներից մեկի առողջությունը ծայրահեղ ծանր է, որի համար հիմնադրամը 400 հազար դրամ է հատկացնելու:

Անդրադառնալով առաջիկա ծրագրերին՝ Ա. Ճաղարյանը «*Ազգ*»-ի հետ զրույցում ասաց, որ առաջիկայում կհայտարարեն եւս երկու մրցույթ՝ «Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում» նախաձեռնության հետ համատեղ կպարգեւատրվեն Կարեն եւ Սամվել Կարապետյանների հայրենի Լոռու մարզի գերազանցիկ ուսանողները, նաեւ ՀՀ բացարձակ գերազանց սովորող ուսանողները, կլինի նաեւ Տերյանի գրքի շնորհանդեսը, որը հրատարակվել է «Տաշիր» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# Առկա քաղաքական ստատուս քվոն...

*1-ին էջից*

**Ինչպես եւ ընտրություններից երեք-չորս ամիս առաջ, հիմա էլ դեռ հայտնի չեն, թե ի՞նչ կերպ են տարբերվելու իշխանական մեծամասնության եւ նրա այլընտրանք՝ կտեռքի մյուս թեւի գործելակերպն ու մոտեցումները, անգամ եթե դրանք նեղ շրջանակում հայտնի են, ու միմյանց հետ պայմանավորվածություն կա՝ հասարակությունն այդ մասին ոչինչ չգիտի: Ու մի այնպիսի հայտարարություն, թե նպատակահարմար չէ գործադիրում պատասխանատվություն ստանձնել, դեռ չի հստակեցնում, թե դեպի ուր են տանում մեզ մեր քաղաքական ուժերը նախագահական ընտրություններին ընդառաջ, արդյո՞ք զուտ անձերի, նախագահական ընտրություններին նրանց մասնակցության խնդիրն է վճռվում լոկ, թե նաեւ համակարգերի (ավելի շուտ՝ առաջինը), եւ մեր խեղճ ժողովուրդն ինչ սպասի այդ բոլորից:**

**Բազմաթիվ գործոններ կան այս չհստակեցումների կամ, ինչպես մենք ենք ասում, քաղաքական ստատուս քվոյի՝ առայժմ երկար պահպանման համար, իսկ ստատուս քվոյի պահպանումը հասարակության շահերից չի բխում: Առաջինն ու ամենաէական գործոնն այն է, թե ի վերջո ովքեր են որոշում իրենց թեկնածությունը դնել առաջիկա նախագահական ընտրություններում: Երկրորդն այն է, թե դրսից ու ներսից իրար համակցված ի՞նչ ուժեր ու խաղացողներ են կանգնելու տվյալ թեկնածուների թիկունքում, եւ տվյալ թեկնածուներն այնքան շանս կստանան հաղթելու, որքան շանս ունեն նրանց թիկունքում խաղացողները միմյանց հաղթելու, միմյանց հետ կոմպրոմիսի գալու կամ հարաբերություններ սրելու եւ, հակառակը, մեղմելու առումով: Այս հարցերը դեռեւս չեն հստակված բոլոր՝ ե՛ւ դրսի, ե՛ւ ներսի մակարդակներում, ու պարզ է, որ բոլոր ուժերին, մինչեւ հստակեցնելը, պայմանավորվելը, կամ, ընդհակառակը, միմյանց հանդեպ անհաշտ կեցվածքի որդեգրումը, ձեռնտու է ներկայիս քաղաքական ստատուս քվոն: Պարզ է, որ որեւէ թեկնածու, հաղթելու դեպքում, եւ առաջին հերթին հիմնական ֆավորիտ համարվող Սերժ Սարգսյանը, կստանա քարտ բլանշ՝ վերջապես կազմելու Հայաստանում ի՛ր ուզած կառավարությունը, ով ի վերջո միջազգային բարձր չափանիշներով կկարողանա խնդիրները լուծել: Կուզենա Հայաստանի խորհրդարանն ավելի մարդկային տեսքի բերել՝ նոր ընտրություններով: Իսկ դրա համար ընտրվելիք նախագահին շատ ժողովրդավարական եւ կասկած չհարուցող ընտրություններ են հարկավոր: Դրա համար այդ նոր նախագահը պետք է ունենա ոչ թե սոսկ ընտրողների հարկավոր քվեի ինչ-որ մակարդակ, այլ շատ բարձր եւ շատ մաքուր քվե: Համաձայնենք՝ սա նախագահի ապագա բոլոր հնարավոր թեկնածուների համար դժվար գործ է: Ու ահա այս պատճառով էլ հիմա երկար է արտաքին խաղացողների լեզուն: Եվ ի՞նչ իրավիճակ կլինի մեր տարածաշրջանում նոր տարվա գարնանը, երբ տեղի կունենան նախագահական ընտրությունները, ու այն, ինչ այսօրվա մեծ խաղացողների մղիչ ուժն է, սիրիական, իրանական խնդիրներին խառնվելու արդյունքում ամիսներ հետո կարող է բոլորովին ուրիշ բովանդակություն ունենալ:**

**Այնպես որ այժմ առկա քաղաքական ստատուս քվոն դեռ ամիսներ պահպանվելու է, այն ձեռնտու է ՀՀԿ-ին ու նրա առաջնորդին, եւ ԲՀԿ-ին ու նրա առաջնորդին ու նրանց ներշնչողին: Իսկ Օսկանյանի հետ տեղի ունեցողը հնարավոր է, որ միայն պրոֆիլակտիկ կամ զսպող նշանակություն ունի՝ ավելորդ էյֆորիայից զրկել փորձելով մեծամասնության այլընտրանքին, որպեսզի այս ուժը հարկավորից ավելի չջանա:**

**Նույն՝ երկուստեք զսպման նշանակությունը կարող է ստանալ կառավարության ծրագրի մի լավ քննադատությունն այսօր ԲՀԿ-ի եւ այլ ուժերի կողմից, քանի որ չենք կարծում, ի վերջո, որ կառավարության ծրագիրը հավանության չարժանանա՝ անհրաժեշտ նվազագույն ձայները մեծամասնությունն ունի: Ուրիշ խնդիր, որ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը կարող է քննադատության բարձր դոզայից անհարմար վիճակի մեջ ընկնել, քանի որ քննադատության արտաքին ցուցափեղկը լավ կառավարման մեծ ջանքեր է պահանջելու: Սակայն որքան որ թափով քննադատելու են կառավարության ծրագիրը, նույն արագությամբ էլ այն ընդունվելու է՝ այժմ առկա քաղաքական ստատուս քվոն է հուշում դա:**

**Երբ այդ ստատուս քվոյի խախտման առաջին ակնհայտ նշանները երեւան, այն ժամանակ էլ կխոսենք, բայց դա դեռ ամիսներ չի լինի:**

ԼՈՍ ԿԱԲՈՍ

# Մի բուռ «ուղերձներ» Օբամայից, Պուտինից, Օլանդից

*1-ին էջից*

Թեեւ հայտարարության մնացյալ հատվածում որոշակի մոտեցում է ներկայացվում վերջին իրադարձություններին ու բանակցային գործընթացին ընդհանրապես, սակայն, ակնհայտորեն, հավաստության նշանով մատուցվող այսօրինակ «գնահատականները» առանձնակի ազդեցության հնարավորություն չեն կարող ունենալ, հատկապես երբ տեքստում ներկայացվող «կարեւոր որոշումների ընդունման» հիմնական ու ցցուն խոչընդոտողը մնում է Ադրբեջանը, որն, ի դեպ, նույն համանախագահող երկրների նախագահների հետ հանդիպումների ավարտին ստորագրված հայտարարությունները ոտնահարում է ադրբեջանական մայրաքաղաք չհասած:

«Մենք՝ համանախագահող երկրների նախագահներս, միասնական ենք ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը մեր հաստատակամ հանձնառության հարցում: Հակամարտության կողմերը չպետք է այլեւս հետաձգեն տեւական ու խաղաղ կարգավորման հասնելու համար անհրաժեշտ կարեւոր որոշումների ընդունումը», հայտարարությամբ երեք նախագահները փաստացի «անգործության» մեջ են մեղադրում ինչպես Հայաստանին, այնպես էլ Ադրբեջանին: Մինչդեռ նույն այդ համանախագահողների բազմաթիվ կոչեր անպատասխան են մնացել միայն Ադրբեջանի պարագայում այն դեպքում, երբ Հայաստանը պատրաստակամություն է հայտնել, ավելին, չի խոչընդոտել որեւէ առաջարկի առնչությամբ հնարավոր զարգացումներին:

«Ափսոսանք ենք հայտնում, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները չձեռնարկեցին այն վճռական քայլերը, որոնց մեր երկրները կոչ էին անում 2011-ի մայիսի 26-ին Դովիլում ընդունված համատեղ հայտարարությամբ», նշում են ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի նախագահները, ըստ էության Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների առաջ խնդիր դնելով ու այդ խնդիրը լուծելու թերեւս մոտակա հնարավորություն ապահովելու հեռանկարով, ասել է թե՝ կարելի է սպասել նախագահական մակարդակի հանդիպման:

Հիշեցնենք, որ «Մեծ ութնյակի» գագաթաժողովի շրջանակներում Դովիլում արված համատեղ հայտարարությամբ նույն այս եռյակի նախագահները նախ շեշտում էին, թե «ժամանակն է ղարաբաղյան հակամարտության բոլոր կողմերի համար կատարելու որոշիչ քայլ խաղաղ կարգավորման ուղղությամբ», Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին կոչ անելով «քաղաքական կամք դրսեւորել ու ավարտին հասցնել Հիմնարար սկզբունքները հունիսին կայանալիք գագաթաժողովի ընթացքում»:

Իսկ թե ինչ եղավ 2011-ի հունիսին Կազանում՝ հիշեցման կարիք չկա, միայն նշենք, որ նույն Ադրբեջանը Կազան գնաց ոչ թե ինչ-որ բան «ավարտին հասցնելու» մտադրությամբ, այլ, ինչպես հետագայում պարզվեց, «տասը առաջարկները» թեւի տակ դրած, ինչն էլ փաստացի մեծ հույսեր ու սպասումներ ծնած Կազանի հանդիպումը ձախողում դարձրեց: Իսկ նույն դովիլյան հայտարարության մեջ արված կոչը, թե «ուժի կիրառումն է ծնել ներկայիս առճակատման ու անկայունության վիճակը, ու նորից ուժի կիրառումը նոր տառապանք ու ավերածություն կբերի ու կդատապարտվի միջազգային հանրության կողմից», ադրբեջանական կողմի արձագանքի առումով այդպես էլ մնացել է օդում կախված, հատկապես երբ նույն այդ կոչն ավարտվում էր՝ «կողմերի առաջնորդներին կոչ ենք անում իրենց բնակչություններին պատրաստել խաղաղության, այլ ոչ պատերազմի»: Այս հարցում էլ Ադրբեջանը նախընտրում է աշխարհին շանտաժ անելու իր ռազմատենչ հռետորաբանությունը բանեցնել, իսկ նույն միջազգային հանրությունը չի դատապարտում թեկուզ «բոլոր հայերը մեր թշնամին են» կամ «հայերը ֆաշիստ են» հայտարարություններով սեփական ժողովրդին ատելության դրդող Ադրբեջանի նախագահին:

Ինչեւէ, հունիսի 19-ի ժամը 01.15-ով թվագրված վերջին հայտարարությունում, այնուամենայնիվ, փորձ է արվում դրական, լավատեսական մոտեցում էլ ընդգրկելու: «Այդուհանդերձ, արդեն իսկ ձեռք բերված առաջընթացը պետք է ազդակ հաղորդի համընդհանուր խաղաղության ապահովման տանող շրջանակային համաձայնության աշխատանքն ավարտելուն», նշել են նախագահները՝ կրկին չմանրամասնելով, թե առաջընթաց ասվածը ինչու է մնացել կես ճանապարհին:

«Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդներին կոչ ենք անում անպայման «արագացնել» 2012-ի հունվարի 23-ին Սոչիում իրենց արած հայտարարության մեջ նշված ղարաբաղյան հակամարտության կարգավորման Հիմնարար սկզբունքների համաձայնեցումը», ասվում է հայտարարությամբ, հավելմամբ՝ «Որպես իրենց քաղաքական կամքի հաստատում նրանք պետք է ձեռնպահ մնան բանակցություններում մաքսիմալիստական դիրքորոշում դրսեւորելուց, պահպանեն 1994-ի հրադադարի համաձայնագիրը եւ խուսափեն լարվածությունը ուժգնացնող թշնամական հռետորաբանությունից»:

Թե հատկապես ո՞ւմ պետք է հասցեագրվեին այս կոչերը՝ առավել քան ակնհայտ է, ճիշտ այնպես, ինչպես նույն հասցեատերն ունի այս համատեղ հայտարարությամբ Հելսինկյան եզրափակիչ ակտի երեք սկզբունքներով՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառմամբ, տարածքային ամբողջականությամբ ու ժողովուրդների իրավահավասարությամբ եւ ինքնորոշման իրավունքով ղեկավարվելու կոչերը:

Օբաման, Պուտինն ու Օլանդը հայտարարությամբ հավաստիացրել են. «Մեր երկրները կշարունակեն աշխատել կողմերի հետ: Մենք նրանց կոչ ենք անում ամբողջությամբ օգտագործել Մինսկի խմբի համանախագահների միջնորդային օժանդակությունը: Ի վերջո խաղաղության ճակատագիրը կախված կլինի հակամարտության մասնակիցների համաձայնության գալու պատրաստակամությունից՝ փոխըմբռնման, այլ ոչ միակողմանի առավելությունների հասնելու ճանապարհով, ինչպես նաեւ ընդհանուր բարիքի գիտակցմամբ, որ խաղաղություն կբերի նրանց ժողովուրդներին ու ապագա սերունդներին»:

Մնում է ասել՝ «անուշ» կամ «անուժ»՝ ով ինչպես կհասկանա:

# Գաղափարաբանություն

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## Մեր հոգեբանական որոշ ախտերի մասին

### Ազգային սնապարծություն

Ազգի իրական արժեքներով եւ առաքինություններով հպարտանալու փոխարեն սին, դատարկ բաներով պարծենալը, որն, առաջին հերթին, արդյունք է անցեղածանաչ լինելու, մեզանում հազվադեպ երեւույթ չէ: Ազգային սնապարծության դրսեւորում պիտի համարել, օրինակ, երբ հպարտանում ենք, թե հունաց այսինչ կայսերը հայեր են եղել, Նապոլեոնի զորականների մեջ հայեր կային, Ռուսաստանի դիկտատորը հայ էր: Իհարկե, արժե իմանալ, թե ինչերի են ընդունակ մեր ազգակիցները նաեւ Հայաստանից դուրս, բայց հայությունը նրանց երախտագիտության խոսք չունի երբեւէ ասելու:

Հաճախ հպարտ ասում ենք, թե Բաքուն կամ Թիֆլիսը հայերն են ստեղծել. իսկ ինչո՞ւ Հայաստանում նույնը չեն ստեղծել: Ժամանակին նաեւ հպարտացել ենք, թե Ստալինի ամենամեծ արձանը հայերս ենք կանգնեցրել, Լենինի դամբարանը հայ է կառուցել. այո՛, հոյակերտ արձան ու դամբարան ենք նվիրել մեր ազգի դահիճներին եւ դեռ հպարտանում ենք:

Սնապարծության առարկա կարող է դառնալ նույնիսկ իրական առաքինությունը, երբ վերջինիս վրա տարածվում է հոգեւոր ծուլությունը: Օրինակ, հաճախ, տեղի-անտեղի վկայում ենք, թե «արիացի» ենք: Բայց որքանո՞վ ենք դրան արժանի: Ուրեմն, նախ արժանի լինենք մեր արիական կոչմանը, որպեսզի նաեւ իրավունք ձեռք բերենք դրանով հպարտանալու:

### Ազգային գերարժեքություն

Այն՝ մեզ շրջապատող աշխարհը չճանաչելու եւ այդ աշխարհում մեր իրական արժեքներն ու առաքինությունները գերագնահատելու արդյունք է:

- Մենք ենք «Աստծո միակ ընտրյալը», միակ մշակութաստեղծ, արարչագործ ազգը,- հայտարարում են այս մոլորության գերիները,- եւ եթե վերանանք աշխարհի երեսից, մարդկությունը կկործանվի, քանզի այլեւս ընդունակ չի լինի արարման: Ուրեմն,- եզրակացնում են նրանք,- Արարիչը թույլ չի տա, որ մենք վերանանք:

Դժվար չէ հասկանալ, որ այս ամենը կարող է ազգին մղել հոգեկան անգործության՝ պայմանավորված ծույլ ճակատագրապաշտությամբ: Այնինչ, ազգերի գոյության ընթացքը բազմիցս փաստել է, որ յուրաքանչյուր ազգ ինքն է ամենօրյա պայքարով դարբնում իր ճակատագիրը եւ ամեն վայրկյան «դատապարտված» է ապացուցելու, որ ինքն արժանի է գոյության:

Ազգային գերարժեքությանը պիտի վերագրել նաեւ մեզանում մասնակիորեն առկա այն տեսակետը, թե հայերս պիտի ստանձնենք բոլոր արիական ազգերին համախմբելու, արիական միասնական ընտանիք կազմելու առաքելությունը: Կարծում ենք, որ այս մտայնությունը միամիտ երեւակայության ու երազկոտության արգասիք է եւ ի վերջո կարող է վերածվել արիական կեղծ «ինտերնացիոնալիզմի»:

### Կույր նորահավատություն

Այն պատել է մեզ դարեր շարունակ, բազմիցս պատճառ դարձել մեր խոր հիասթափության, երբ հերթական անգամ ճաշակել ենք դրա դառը պտուղները: Կուրորեն ընդունել ենք մեզ հրամցված ամեն նորը, եւ մեր չկշռադատված նորահավատությունը հաճախ հմտորեն օգտագործվել է օտարների կողմից, որոնք «համամարդկային սիրո ու եղբայրության» փետուրներով մեզ են պարտադրել իրենց նենգ կամքը: Եվ փոխանակ ուրիշից վերցված ամեն լավ նորը ազգայնացնելու, մենք օտարի բերած վատ նորն ընդունելով ապազգայնացել ենք:

«Միայն հա՛յն է աշխարհի երեսին բոլոր ազգերուն մեջ, որ ամեն «ություն», քրիստոնեությունից մինչեւ ընկերվարություն, առեր է այնպես բառացի ու տառացի կերպով, վերացական հափշտակությամբ՝ ուրանալով եւ մոռնալով ինքնապահպանության ամենատարրական բնազդն անգամ» (Զարեւանդ):

Այդպես եղավ նաեւ մեր օրերում, երբ մենք փարվեցինք Արեւմուտքից մատուցված «արժեքներին», դրսի «բարեգործներին» ընդունեցինք գլխներիս վրա, փոխանակ առաջադրելու մեր էությունից բխող, մեր ոգեկառույցին համապատասխան նոր իդեալներ, նոր գաղափարներ...

Այս կույր նորահավատությունը հաճախ բացատրվում է մեր՝ իբր դյուրահավատ ու քաղաքականապես միամիտ լինելու պարագայով: Անշուշտ, նաեւ դրանով, բայց առաջին հերթին՝ ազգի մտավոր, հոգեւոր եւ քաղաքական վերնախավի տկար լինելու հանգամանքով, քանզի վերջինս անհրաժեշտ պահերին անկարող է գտնվում զգալ ժամանակի շունչը, հեռու պահել ազգին մոլորություններից եւ մատուցել նրան հավիտենական արժեքներ:

ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ
ՀՀԿ նախագահի տեղակալ

## Սեղուհ-190

Ուսումնասիրություններիս ընթացքում հաճախ եմ հանդիպել իրավիճակների, երբ ազգանվեր գործունեություն ծավալած եւ իրենց ողջ գիտակցական կյանքն հայրենիքին անմնացորդ նվիրաբերած զգալի թվով գործիչներ այնքան էլ չեն արժանացել ուշադրության[1]: Առավել եւս նրանք, որ հրաշալի կերպարներ են մատաղ սերնդին դաստիարակելու, նրանց համար հայրենասերի օրինակ ծառայելու, ոչ միայն չեն մեծարվել ու փառաբանվել, այլեւ, մնալով ստվերում, ժամանակի ընթացքում անտեսվել ու անարդարացիորեն մոռացվել են: Խոսքս հատկապես վերաբերում է հայ անդրանիկ ու միակ երկրածին Արմենական կուսակցության ու հայոց փրկության վեհ գործի նվիրյալ, վաղամեռիկ Սեղուհին: Գործիչ, ում պայծառ կերպարը, վեհանձն ու մարդկային նկարագիրն ու ծննդյան 190-ամյակը համեստորեն «պարտավորեցնում են» գրել իր մասին, արժանին մատուցել մեզանում այնքան էլ հաճախ չհանդիպող ասպետական էությամբ տոգորված կուսակցականին:

Սեղուհը (Երվանդ Քեոսյան) ծնվել է Արաբկիրում 1882 թ., ականատես եղել թուրքական դահիճների ոճրագործություններին, որոնք, ի թիվս բազմաթիվ անմեղ արաբկիրցիների, 90-ական թվականներին սպանում են նաեւ նրա հորը: Տասներեքամյա պատանին, հոր սպանության վիշտը սրտում եւ վրեժի երդումը աչքերի մեջ, շուտով տեղափոխվում է Խարբերդ, իսկ մեկ տարի անց՝ 1893-ին, ընդունվում Էջմիածնի Գեւորգյան ճեմարան: 1901 թ. ավարտելով՝ մեկնում է Վան: Այնուհետեւ շրջում է Վասպուրականի գավառներում, լինում է Մոկսում, Գավաշում, Արճեշում եւ այլ տեղերում, իսկ հետո գնում է Պարսկաստան եւ երեք տարի Ուրմիայում զբաղվում ուսուցչությամբ[2]:

Այստեղ ծանոթանալով Արմենական կուսակցության ծրագրին ու կանոնագրին եւ շփվելով հատկապես Արմենակ Եկարյանի հետ՝ դառնում է համոզված արմենական: Կապեր է հաստատում Սալմաստի արմենական գործիչների հետ: Գնահատելով Սեղուհի մեծ առաքինությունները, Սալմաստի արմենական վարիչ մարմինը, անսալով նշանավոր արմենականներ Գր. Պեոզիկյանի եւ Ա. Եկարյանի հորդորներին, նրան որպես գործչի ուղարկում է Վան: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ Սեղուհը 1906 թ. հունվարին, արմենական Գաբրիել Սեմերճյանի ընկերակցությամբ, ծպտված մտնում է Վան եւ ծավալում բեղուն գործունեություն: Շուտով իր խելացի պահվածքի, ակտիվ գործունեության ու արժանիորեն վաստակած հեղինակության շնորհիվ նա դառնում է Վանի Արմենական մասնաճյուղի ղեկավարը: Հավաքելով ու միավորելով կուսակցության ցաքուցրիվ ուժերը, արագորեն մեծացնում է արմենական խմբերի քանակը եւ զարկ տալիս ինքնապաշտպանության գործին: Հիմնում է Վանի Արմենական «Երիտասարդաց» միությունը ու նրա խոսափող «Կայծ» խմորատիպ թերթը եւ, վերջապես, գլխավորում է իր զինակիցների պայքարը այլ քաղաքական ուժերի ոտնձգությունների դեմ: Սեղուհը հատկապես փորձում է իր խելացի, հանդարտ ընթացքով մեղմել ՀՅ Դաշնակցության եւ Արմենական կուսակցությունների միջեւ աճող լարվածությունը, որը հետեւանք էր նրանց միջեւ ազդեցության համար մղվող անզիջում մրցակցության:

Սեղուհն իր եռանդուն եւ ժողովրդանպաստ գործունեության շնորհիվ շուտով վայելում է շատերի սերն ու հարգանքը: Այս հանգամանքը զգալի դեր է խաղում 1896 թ. Վանի հերոսամարտից խիստ թուլացած արմենականների համախմբման ու հզորացման գործում եւ նպաստում երկարատեւ ընդմիջումից հետո Արմենական կուսակցության նկատելի աշխուժացմանը Վանում: Միեւնույն ժամանակ, մեր մյուս քաղաքական կուսակցություններն ու չեզոք գործիչները եւս մեծ հարգանք են տածում նրա անձի նկատմամբ, որի արդյունքում առժամանակ քաղաքում դադարում են միջկուսակցական անիմաստ գզվռտոցները, որոնք չափազանց բացասական դեր էին խաղում եւ ջլատում առանց այն էլ փոքրաթիվ մեր ուժերը:

Սակայն Սեղուհի վրա հասած եղերական նահատակությունը ծանր եւ անդառնալի կորուստ եղավ հայ ազատագրական շարժման ու հատկապես Արմենական կուսակցության համար: Դա տեղի ունեցավ 1908 թ. հունվարի 23-ին, Վանում, թուրքական զինվորների կողմից՝ Դավոյի հայտնի դավաճանության հետեւանքով առաջացած դեպքերի ժամանակ: Դավոն կառավարությանը ոչ միայն մատնել էր Դաշնակցության զենքի շատ թաքստոցներ, այլեւ տեղեկացրել արմենականների զենք ներկրելու մտադրության մասին: Խուզարկող թուրք զինվորները մտնում են այն փողոցը, ուր Ծերուն Պեզազյանի տանը գաղտնի բնակվում էր Սեղուհը: Չուզենալով հայ պատվարժան այդ ընտանիքի դժբախտության պատճառ դառնալ, պատսպարված տնից դուրս գալու պահին Սեղուհը խոցվում է «պահակ կեցած թուրք զինվորներու տարափից» տակավին երիտասարդ, ընդամենը 26 տարեկան հասակում[3]: Վանը ցնցված էր, եւ, ինչպես վկայում է ականատեսներից մեկը, Սեղուհի սպանության պատճառով «Ամբողջ Վասպուրականը սգացին լաց ու կոծի մեջ էր»[4]: Որովհետեւ հայ ժողովուրդը խորապես սիրում էր Սեղուհին, իսկ արմենականները «պաշտամունքի հասնող սէր կը տածէին իրենց երիտասարդ գործիչին նկատմամբ. իսկ Դաշնակցութիւնը ակնածանք ունէր անոր հանդէպ»[5]:

Երվանդ Քեոսյանին ճանաչողները նրա մասին թողել են բազմաթիվ ջերմ տողեր: Արմենակ Եկարյանը, օրինակ, գրում է, որ Սեղուհը «թէեւ երիտասարդ, բայց ուշիմ եւ հեղափոխական անձնաւորութիւն էր»: Նա իրավամբ նկատեց, որ Դաշնակցության երբեմն ծայրահեղության հասնող անհանդուրժողականության «դեմ կանոնաւոր կազմակերպութեամբ մը միայն հնարաւոր պիտի ըլլար մաքառիլ: Ահա թե ինչ բանի կձգտեր արմենական ղեկավար Սեղուհը»[6]: Սեղուհի մահվամբ, ինչպես ճշմարտացի նշում է Ա. Եկարյանը, արմենական «անձնվերներու շարքը գրեթե կը փակվի», որովհետեւ քիչ անց «Վերակազմեալներու եւ Արմենականների միաձուլումով կազմված էր նոր կուսակցություն մը»[7], այսինքն՝ 1908 թ. տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջման եւ դեմոկրատական «ազատությունների» հռչակման արդյունքում նշված քաղաքական ուժերի համախմբմամբ ձեւավորվեց Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը:

Իմ խորին համոզմամբ՝ սեղուհները երբեք էլ չեն մեռնում: Կարծում եմ, որ իրենց արյան գնով արցախյան հերոսամարտը հաղթանակած թաթուլկրպեյանների, վարդանբախշյանների, մոնթեների ու մերօրյա մյուս հերոսների մեջ մեր ազգային մեծերի հետ ավել կամ պակաս չափով կենդանի էր ու հերոսացման էր մղում նաեւ Սեղուհ-Երվանդ Քեոսյանը:

[1]Դա վերաբերում է նաեւ Արմենական կուսակցության պատմությանն ու այդ կուսակցության նվիրյալների մասին շահեկան աշխատությունների այնպիսի հեղինակների, ինչպիսիք են Վ. Ղազարյանը, Կ. Սարաֆյանը, Հ. Պողոսյանը, Ն. Ակիշյանը եւ ուրիշներ: Բացառություն է թերեւս Արա Ահարոնեանի հակիրճ խոսքը, «Հերոսական դէմքեր Ռ.Ա.Կ.-ի», Լոս Անճելըս, 2001, 111-114 էջեր,:

[2]ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 427, ց. 1, գ. 15:

[3]Եր. Տեր-Մկրտչյան, էջ 503:

[4]**«Ազգ»**, 1908, մայիսի 2:

[5]Արա Ահարոնեան, «Հերոսական դէմքեր Ռ. Ա. Կ.-ի», Լոս Անճելըս,2001, էջ 114:

[6]Հուշեր Արմ. Եկարյանի, էջ 144:

[7]Ա. Եկարյան, էջ 151:

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պգթ.

## «Հայկական լրագրությունը»՝ արժեքավոր ուսումնասիրություն

**Ուոթերթաունում (Մասաչուսեթս) անգլերեն լեզվով լույս է տեսել Ժիրայր Ղարիբյանի «Հայկական լրագրությունը 1794-1977 թթ.» արժեքավոր ուսումնասիրությունը, որի առաջաբանում հեղինակը արձանագրել է. «Հազվագյուտ են այն ազգերը, որոնք պարտավորված են զգում թերթեր ու ամսագրեր հրապարակել, որպեսզի ապահովեն իրենց վերապրումն ու կենսունակությունը»: Իսկ Ուեսլեյըն համալսարանից դոկտ. Խաչիկ Թոլոլյանն իր խոսքում նշել է, որ իրենց պատմության ընթացքում հայերը մեծ տեղ են հատկացրել լրագրությանը ինչպես քաղաքական, այնպես էլ մշակույթի կյանքի նորություններին ծանոթանալու համար:**

**«Արմինըն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի մայիսի 12-ի համարում տպագրված Դեֆնի Աբիլի գրախոսականից տեղեկանում ենք, որ հեղինակը հիմնադիրն է եղել մինչեւ օրս Բոստոնում հեռարձակվող «Հայկական ակնարկ ռադիոժամի», եւ գիրքը լույս է տեսել նրա այրու՝ Եվգինե Ղարիբյանի ջանքերով՝ ի հիշատակ վա-**




**ղամեռիկ ամուսնու, որը վախճանվել է 1991 թվին:**

**Ժիրայր Ղարիբյանը ծնվել է Բաղդադում (Իրաք): Ուսումնառությունը սկսել է ծննդավայրում, բայց շարունակել է Լոնդոնում, որտեղ էլ հիմնադիրներից է եղել ՀՅԴ «Նավասարդյան» կոմիտեի: 1964-ին տեղափոխվել է եւ տասը տարի ապրել Թեհրանում: Երիտասարդ սերնդի դաստիարակության եւ կրթության խնդիրներով մտահոգված հիմնել է «Ալիք պատանեկան» երկշաբաթյա պարբերականը: 1975-ին հրավիրվել է Մ. Նահանգներ՝ ստանձնելու ՀՅԴ երիտասարդական դաշնության գործադիր քարտուղարի պաշտոնը: Այդ ժամանակ է, որ Բոստոնի համալսարանի լրագրության բաժնում սովորելիս մագիստրոսի աստիճանի թեմա է ընտրել հայկական լրագրությունը: Նա Մ. Նահանգներում հրատարակվող 52 պարբերականների անուններն է գրանցել 1977-ին, որոնցից առաջինը «Արեգակն» է եղել Հայկ Էկինյանի խմբագրությամբ:**

**«Հայկական լրագրությունը 1794-1977 թթ.» գրքից օրինակներ ունենալու համար այցելել yevgine@aol-com կայքը:**

Հ. Ծ.

# Թուրքիայի վարչապետարանը որոշել է «հայկական պնդումներին» պատասխանել ընդհանուր՝ մեկ կենտրոնի միջոցով

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նախաձեռնություններն ու թուրքական ժխտողականության դիրքերի սպառումը փաստի առջեւ է կանգնեցրել Թուրքիային: Թերեւս դա է պատճառը, որ վարչապետարանը որոշել է կատարելապես հրաժարվել Հայկական հարցի առնչությամբ առ այսօր գործադրվող բոլոր ձեռնարկումներից եւ «ցեղասպանության հայկական պնդումներին» հետայսու պատասխանել մեկ ընդհանուր կենտրոնից:

Այդ մասին հունիսի 18-ին «Հաբեր.թուրք» կայքէջում նշել է Մուրադ Բարդաքչըն: Նա գրել է. «Այսօր Թուրքիայում հայկական պնդումներին պատասխանելու գործին լծված կառույցները, հաստատությունները, կենտրոնները եւ այլն, մի ամբողջ աշխարհ են բռնում: Թուրքական պատմական ընկերության հայկական բաժինը, զինված ուժերի գլխավոր շտաբի որոշ կառույցները, մի շարք համալսարաններ, հիմնադրամները, միությունները եւ տեսակ-տեսակ աներեւակայելի հաստատությունները սրանց թվում են...

Տարիներ շարունակ, անդադար աշխատելով, հրատարակչությամբ են զբաղված: Սակայն սրանց գործունեությունն ունի տարօրինակ առանձնահատկություն այն առումով, որ բոլոր հրատարակությունները նախատեսված են ոչ թե արտասահմանի, այլ հենց Թուրքիայի քաղաքացիների համար.... Այսինքն՝ սրանք փոխանակ աշխարհով մեկ գործունեություն ծավալող հայկական սփյուռքի պնդումներին պատասխանելու, դիմում են Թուրքիայի բնակչությանը, այն էլ. «Այդ մարդիկ սուտ են խոսում, հանկարծ չհավատաք: Մանավանդ որ 1915-ին ոչ թե մենք նրանց, այլ նրանք են մեզ մորթել» կարգի խոսքերով: Սրանց ասածը ոչնչություն է, գործունեության արդյունքը՝ առավել եւս, քանի որ մեր հրատարակությունները ուղղված են մեր քաղաքացիներին, ուստի դրսում ուշադրության չեն արժանանում: Ինչ վերաբերում է համալսարանների եւ մասնավոր հաստատությունների ուսումնասիրություններին, ապա սրանք էլ պետության պաշտոնական «Մենք չենք արել, այլ՝ նրանք» թեզն արտահայտելու պատճառով չեն ընդունվում: Այս կարգի գրքերն ու գրքույկները, որոնք մեր դեսպանատները բաժանում են արտասահմանում, գրի են առնվել քարոզչության ձանձրալի ոճով: Այդ իսկ պատճառով ոչ ոք չի կարդում: Եթե կարդան էլ, բան չեն հասկանա, որովհետեւ այս հրատարակություններում ոչ թե 1915-ին տեղի ունեցածն է գրված, այլ անհասկանալի, անիմաստ ձեւով պաշտպանվելու փորձ է արվում:

Հետեւաբար վարչապետարանի Հայկական հարցով զբաղվելու պարտականությունն ընդհանուր մեկ կենտրոնին հանձնելու որոշումը խիստ կարեւոր է, թերեւս տարիներ առաջ պետք է ընդունվեր: Չմոռանալ, որ Հայկական հարցն ու սփյուռքի վերաբերմունքը առաջիկա երեք տարում բոլորովին այլ բնույթ են ստանալու... տեղահանության 100-րդ տարելիցին պատրաստվող սփյուռքը 2015-ի ապրիլին բոլորովին այլ գործունեություն է ծավալելու, եւ դիվանագիտության շրջանակներում մեծ հնչեղություն ունեցող գործեր է կատարելու... Ամեն կերպ ձգտելու է, որ 1915-ի իրադարձությունները որպես ցեղասպանություն ճանաչվեն Միացյալ Նահանգների գլխավորությամբ բազմաթիվ երկրներում եւ, ամենայն հավանականությամբ, հասնելու է իր նպատակին»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# PKK-ի հետ բախումները անընդհատ կորուստներ են պատճառում

## *Երեկ սպանվեց 9 թուրք զինծառայող*

Երեկ Հաքքյարի նահանգի Դաղլըջա շրջանում PKK-ի գրոհայինների հետ բախումները հանգեցրել են 8 թուրք զինծառայողի սպանությանը, 16-ը վիրավորվել են: Սա այն վայրն է, որտեղ PKK-ականները ժամանակին հարձակվելով պահակակետի վրա, 12 թուրք զինծառայողի սպանել էին, իսկ 8-ին գերի վերցրել են տարել Հյուսիսային Իրաք:

Երեկ PKK-ի գրոհայինները նաեւ Հաթայում մարտի են բռնվել թուրք զինծառայողների հետ, որոնցից մեկը սպանվել է: PKK-ականների կորուստների մասին թուրքական լրատվամիջոցները լռում են: Ըստ երեւույթին PKK-ն կորուստ չի տվել, այլապես գոհունակությամբ կնշեին:

Պարզապես Դաղըլջայի միջադեպից հետո հայտարարությամբ հանդես է եկել քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության գլխավոր նախագահ Դեմիրթաշը: Նա, ըստ «Դունյա բուլթենի» գործակալության, PKK-ից պահանջել է վայր դնել զենքը, դադարեցնել թուրքական զինված ուժերի ռազմական գործողություններն ընդդեմ PKK-ի եւ ավելացրել. «Պետք է վերջ տալ այս պատերազմին: Պետք չէ դիտորդի դերում հետեւել, թե մեր երիտասարդներն ինչպես են իրար սպանում»:

Հ. Չ.

# Պուտինը եւ Օբաման Սիրիայի, Իրանի եւ հակահրթիռային համակարգի մասին

Մեքսիկայի Լոս Կաբոս քաղաքում բացված «Մեծ քսանյակի» գագաթաժողովի շրջանակներում ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահներ Բարաք Օբաման եւ Վլադիմիր Պուտինը դռնփակ առանձնազրույցի ընթացքում քննարկել են մի շարք կարեւոր հարցեր, հաղորդում է ՌԻԱ գործակալությունը: Հանդիպումից հետո Պուտինը լրագրողներին հայտնել է, որ ինքը եւ Օբաման «գտել են մի շարք շփման կետեր»:

Բանակցությունների ընթացքում երկու երկրների նախագահները մասնավորապես քննարկել են Սիրիայի իրադրությունը: Հանդիպման արդյունքների հիման վրա ընդունված համատեղ հայտարարության մեջ ընդգծվում է, որ Սիրիայի ժողովրդին հարկավոր է հնարավորություն տալ ինքնուրույնաբար ընտրելու իր հետագա զարգացման ուղին: Ընդսմին երկու երկրների ղեկավարները պաշտպանություն են հայտնել Սիրիայի գծով ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Կոֆի Անանի խաղաղ կարգավորման ծրագրին եւ հակամարտության բոլոր կողմերին կոչ են արել անհապաղ դադարեցնել բռնարարքները:

Հայտարարության մեջ ասվում է, որ երկու երկրների նախագահները Իրանին կոչ են անում կատարել ՄԱԿ-ի ԱԽ-ի եւ ՄԱԳԱՏԷ-ի հանդեպ ստանձնած պարտավորությունները, ինչպես նաեւ ՄԱԳԱՏԷ-ի հետ համագործակցել սեփական միջուկային ծրագրին առնչվող բոլոր հարցերում:

Հանդիպման ժամանակ Օբաման եւ Պուտինը նաեւ քննարկել են Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային համակարգի տեղաբաշխման հարցը: Փաստաթղթում երկու նախագահներն ընդգծել են, որ մտադիր են շարունակել համակարգի հետ կապված երկխոսությունը, չնայած պահպանվող տարաձայնություններին: Նրանք նաեւ հայտարարել են, որ առաջնային խնդիր են համարում հարձակողական սպառազինությունների կրճատման նոր պայմանագրի կատարումը եւ ռազմավարական կայունությանը նվիրված երկխոսության շարունակումը:

Երկու նախագահներն անդրադարձել են նաեւ առեւտրատնտեսական համագործակցության հարցերին, մասնավորապես՝ Ռուսաստանի Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ դառնալուն: Բարաք Օբաման հայտարարել է, որ Ջեքսոն-Վենիկի ուղղման վերացումը իր վարչակազմի գերակայությունն է, իսկ Վլադիմիր Պուտինը իր հերթին նրան շնորհակալություն է հայտնել ԱՀԿ-ին Ռուսաստանի անդամակցությանն օժանդակելու համար:

Պուտինը Օբամային հրավիրել է Մոսկվա: Օբաման շնորհակալությամբ ընդունել է հրավերը եւ հույս հայտնել, որ ՌԴ նախագահն էլ կայցելի Միացյալ Նահանգներ:

«Մեծ քսանյակի» գագաթաժողովի շրջանակներում Պուտինը եւ Օբաման առաջին անգամ էին հանդիպում որպես նախագահներ: Նախորդ հանդիպման ժամանակ՝ 2009-ի հուլիսին, Պուտինը Ռուսաստանի վարչապետն էր:

ԿԱՀԻՐԵ

# «Զինվորական հեղաշրջում» Եգիպտոսում



**Եգիպտոսում կառավարող Բարձրագույն զինվորական խորհուրդը հրապարակել է ժամանակավոր սահմանադրություն, որը բանակին տալիս է ամենալայն լիազորություններ: Ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում տվյալ փաստաթուղթը ընկալվում է որպես զինվորական կառավարման հաստատում:**

**Չնայած Եգիպտոսի նախագահական ընտրությունների պաշտոնական արդյունքները հրապարակվելու են միայն հունիսի 21-ին, «Մուսուլման եղբայրների» առաջնորդ Մուհամմադ Մուրսին արդեն հայտարարել է իր հաղթանակի մասին: Երեկ «Ազգը» տեղեկացրել էր, որ Մուրսին ելույթ է ունեցել իր համակիրների առջեւ եւ խոստացել է Եգիպտոսը դարձնել զարգացող եւ ժողովրդավարական երկիր: Կենտրոնական ընտրական հանձնաժողովից տեղեկությունների արտահոսքի հետեւանքով հայտնի է դարձել, որ իրոք Մուրսիի օգտին քվեարկել է 13 մլն մարդ, իսկ Եգիպտոսի նախկին վարչապետ, զինվորական վարչակարգի թեկնածու Ահմադ Շաֆիկի օգտին՝ 1 միլիոնով պակաս: Ժամանակավոր սահմանադրություն հրապարակելով՝ Բարձրագույն զինվորական խորհուրդը փաստորեն ուզում է ամեն կերպ սահմանափակել հաղթանակած իսլամիստ թեկնածուի հնարավորությունները:**

**Նորընտիր իսլամիստ նախագահը զրկվել է դատարանի վճռով արձակված խորհրդարանի աջակցությունից: Պարզություն չկա նաեւ այն հարցում, թե ով է գրելու նոր սահմանադրությունը եւ դրա ընդունումը կհանգեցնի՞ արդյոք նախագահական նոր ընտրությունների անցկացմանը:**

**Սակայն Մուրսիի վիճակը հասկապես ծանրացավ ժամանակավոր սահմանադրության հրապարակումից հետո: Եգիպտոսում եւ արտերկրում շատերը բանակային հրամանատարության օրենսդրական նախաձեռնությունը ընկալում են որպես զինվորական հեղաշրջում, քանի որ փաստաթղթի կետերը հակասում են իշխանությունը փոխանցելու պատրաստակամության վերաբերյալ զինվորական վերնախավի տված խոստումներին:**

**Փաստաթուղթը նախագահին զրկում է գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնից: Նա չի կարող պատերազմ հայտարարել կամ հաշտություն կնքել: Նրա իրավասությունները չեն տարածվում զինված ուժերի վրա, իսկ պաշտպանական բյուջեն եւ եգիպտական բանակի տնտեսական «կայսրությունը» ազատվում են պետական մյուս կառույցների վերահսկողությունից:**

**Մինչեւ նոր խորհրդարանի ընտրությունը երկրում օրենսդիր իշխանության գործառույթները անցնում են Բարձրագույն զինվորական խորհրդին: Եթե նախկին խորհրդարանի նշանակած սահմանադիր ժողովը չկարողանա ավարտել աշխատանքը, ապա այդ մարմնի նոր կազմը կնշանակեն զինվորականները:**

**ԱՄՆ-ը Եգիպտոսի զինվորական ղեկավարությանը կոչ է արել հնարավորինս շուտ ամբողջ իշխանությունը փոխանցել նորընտիր նախագահին: «Անհրաժեշտ է վերականգնել եգիպտացիների վստահությունը ժողովրդավարության հանդեպ: Խորհուրդը պետք է կատարի իր ստանձնած պարտավորությունները», հայտարարել է պետդեպարտամենտի մամլո քարտուղար Վիկտորիա Նուլանդը, որի խոսքերը մեջբերում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

# Ռումինիայի վարչապետը մեղադրվում է գրագողության մեջ

Ռումինիայում պաշտոնյաների գրագողության մեղադրանքների շարան է սկսվել: Գլխավոր դատախազից եւ կրթության նախարարից հետո մեղադրանքների թիրախ է դարձել վարչապետ Վիկտոր Պոնտան: «Նեյչըր» գիտական շաբաթահանդեսում հրապարակված հոդվածում նշվում է, որ 2003-ին Բուխարեստի համալսարանում վարչապետի պաշտպանած դոկտորական թեզի կեսը արտագրված է առանց սկզբնաղբյուրների պատշաճ հիշատակման: Թեզը նվիրված է միջազգային քրեական դատարանի աշխատանքին:

Ավելի վաղ՝ մայիսին, գրագողության մեջ մեղադրվել էր երկրի գլխավոր դատախազ Լաուրա Կովեսին: Սկանդալը արատավորել էր նաեւ այլ պաշտոնյաների, քանզի Կովեսիի գրախոսների թվում էին նրա տեղակալ Մարիուս Յակոբը եւ երկրի հատուկ ծառայությունների պետ Ջորջե Մայորը:

Դրանից մեկ շաբաթ առաջ գրագողության մեղադրանքների պատճառով հրաժարական էր տվել կրթության նախարար Իոան Մանգը: Ծրագրավորմանը նվիրված թեզում նա անբարեխղճորեն օգտագործել է ճապոնացի եւ տայվանցի գիտնականների աշխատությունները, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Ավելի վաղ՝ ապրիլին գրագողության մեղադրանքի պատճառով հրաժարական էր տվել հարեւան Հունգարիայի նախագահ Պալ Շմիտտը: Այն ժամանակ «**Ազգը**» գրեց, որ Պալի՝ ՄՕԿ-ի պատմությանն նվիրված դոկտորական թեզի զգալի մասը արտագրված է մի բուլղարացի հեղինակի աշխատությունից:

# Մշակույթ

*ՆՈՐ ՖԻԼՄԵՐ*

## Էգոյանը գերծանրաբեռնված է աշխատում



Շնորհիվ իր նոր ֆիլմի ֆինանսավորման ձգձգումներին ճանաչված ռեժիսոր Ատոմ Էգոյանը կարողացել է հաղթահարել աշխատանքային գերծանրաբեռնվածության դժվարությունները: «Չգիտեի ինչ անել», խոստովանել է նա, բացատրելով, որ «Սատանայի հանգույցը» ֆիլմի նկարահանումները Նոր Օռլեանում համընկնում էին Չառլստոնում «Ֆենգ Յի Տինգ» չինական օպերայի բեմադրության հետ: Վերջինս Գուո Ուենջինգի օպերան է, որ մայիսի 20-ին պետք է մասնակցեր այնտեղ կայանալիք Սպոլետո փառատոնին: Դրանից հետո նույն օպերան պետք է ներկայացվի Նյու Յորքի Լինկոլն կենտրոնում ամռանը նախատեսված փառատոնի շրջանակներում: Գրեթե միաժամանակ նա բեմադրել էր Կանադայում բրիտանացի դրամատուրգ Մարտին Քրիմփի «Դաժան եւ քնքուշ» պիեսը:

Ինչ վերաբերում է ֆիլմին, «Սատանայի հանգույցը» (Devil's knot) հիմնված է Մարա Լեւերիտի 2002 թվականին լույս տեսած բեսթսելլերի վրա: Գիրքը պատմում է 1993-ին Արկանզասում ութ տարեկան երեք երեխաների սպանության եւ երեք անմեղ պատանիների 18 տարվա բանտարկության դատավճռի մասին: Ի դեպ, այդ անմեղ պատանիներից երկուսը, 18 տարի բանտում անցկացնելուց եւ ազատ արձակվելուց հետո այժմ դարձել են ֆիլմի գործադիր պրոդյուսերները: Ֆիլմում նկարահանվելու համար Էգոյանը դարձյալ հրավիրել է բրիտանացի դերասան Քոլին Ֆըրթին, որի հետ համագործակցել էր «Որտեղ ճշմարտությունն է թաքնված» իր նախորդ ֆիլմի ժամանակ: Ֆըրթը կատարելու է մասնավոր խուզարկու Ռոն Լաքսի դերը: Իսկ սպանված երեխաներից մեկի մոր դերով հանդես է գալու Ռիզ Ուիթերսփունը, որը տասը տարի առաջ Քոլին Ֆըրթի խաղընկերն էր «Լրջախոհ լինելու կարեւորությունը» ֆիլմում՝ ըստ Օսկար Ուայլդի համանուն պիեսի: Դերի մեջ մտնելու համար Ռիզը երկար ժամանակ անցկացրել է սպանված երեխայի իսկական մոր եւ ընտանիքի մյուս անդամների հետ: Ֆիլմի նկարահանումները սկսվելու են հունիսի 25-ին Ատլանտայում: Գրքի էկրանային տարբերակի սցենարը գրել են Պոլ Բորդմանը, Սքոթ Դերիկսոնը եւ Ատոմ Էգոյանը:

Իր գերլարված ծրագրերի հետեւանքով հայազգի տաղանդավոր ռեժիսորը ստիպված է եղել մեկ տարով հետաձգել իր հաջորդ՝ «Գիշերվա թագուհին» վերնագրով հոգեբանական թրիլլերի նկարահանումները: Այս մասին տեղեկացրել է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Հ. Ծ.

## Ցուցահանդես՝ նվիրված հայ գրատպության 500-ամյա հոբելյանին

Հունիսի 12-ին Ամստերդամի համալսարանի ծիսասրահում տեղի ունեցավ «Հայ գրքի սփյուռքը. 1512-2012 թթ.» ցուցահանդեսի բացման արարողությունը: Ցուցահանդեսը կազմակերպվել է Ամստերդամի համալսարանի Ժառանգության հավաքածուների եւ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից՝ Նիդեռլանդների Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության հետ համագործակցությամբ: Այն նվիրված է հայ գրատպության 500- ամյա հոբելյանին, կազմակերպվել է վերջինիս համար կարեւորագույն կենտրոններից մեկում՝ Ամստերդամում, եւ տեւելու է երեք ամիս:

Ցուցահանդեսի բացման արարողությանը Ամստերդամի համալսարանի Ժառանգության հավաքածուների տնօրեն Ստեֆ Սխոլտենը ներկայացրեց ցուցահանդեսի կազմակերպման գաղափարի իրականացման ուղին ու դրա կարեւորությունը: Այնուհետեւ, հայ ժողովրդի պատմության, լեզվի ձեւավորման ու հայ մշակույթի համար դրա կարեւորության վերաբերյալ դասախոսությամբ հանդես եկավ Օքսֆորդի համալսարանի հայագիտության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Թեո վան Լինտը:

Ներկաներին իրենց ողջույնի խոսքով դիմեցին նաեւ Ամստերդամի համալսարանի գործադիր խորհրդի նախագահ, դոկտոր պրոֆեսոր Լուիզ Խունինգ-Սխեպերսը, Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարության Եվրոպայի դեպարտամենտի տնօրեն Յապ Վերները, եւ Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը: Պրն. Վերներն իր խոսքում անդրադարձավ նաեւ միջոցառման կարեւորությանը հայ-հոլանդական հարաբերությունների տեսանկյունից, իսկ պրն. Զարգարյանը նշեց Ամստերդամի հայ գրատպության հիմնական ձեռքբերումների մասին:

Ցուցահանդեսի շրջանակներում տպագրված «Հայ գրատպության սփյուռքը. 1512-2012թթ.» գրքի առաջին օրինակները տկն. Խունինգ-Սխեպերսի կողմից նվիրվեցին պարոնայք Վերներին եւ Զարգարյանին: Ի պատասխան, Հայաստանի ազգային գրադարանի տնօրենը Ամստերդամի համալսարանի գործադիր խորհրդի նախագահին նվիրեց Վենետիկում տպագրված առաջին հայատառ գրքի՝ «Ուրբաթագրքի», կրկնօրինակը, Անի մայրաքաղաքի 1050-ամյակին նվիրված գիրքն ու Վերժինե Սվազլյանի «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայությունները»:

Բացման արարողությանը հետեւեց ցուցահանդեսի դիտումը Ամստերդամի համալսարանի Ժառանգության հավաքածուներին պատկանող «Հատուկ հավաքածուներ» թանգարանում: Մատենադարանից եւ Հայաստանի ազգային գրադարանից բերված, Ամստերդամի համալսարանի Ժառանգության հավաքածուներում ու Լեյդենի համալսարանում խնամքով պահվող ավելի քան 120 նմուշ գրքերի ու այլ ցուցանմուշների միջոցով միջոցառման մասնակիցները, որոնց թվում էին Նիդեռլանդներում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների եւ երկրի գործադիր իշխանության ներկայացուցիչները, հոլանդահայ կազմակերպությունների ու հոլանդական ակադեմիական շրջանակների անդամները, հնարավորություն ունեցան ծանոթանալու հայ գրատպության անցած հինգդարյա ճանապարհին, հայոց պատմությանը, ինչպես նաեւ հոլանդահայ համայնքի պատմությանը:

## Երջանկության ու միայնության սահմանագծին

Բացվե՛ք վարագույրներ, վառվե՛ք լույսեր: Բեմ է գալիս մանուշակագույն կոստյումով միսիսը: Նրա բեմելը սպասված էր ու բաղձալի: Հայ թատերական իրականությանն ակնհայտ էր մեծն հայուհու՝ Գալյա Նովենցի վերադարձը:

Մարդկային կյանքն ասես մի յուրօրինակ ճանապարհ է տարբեր կայաններով: Կայարանը, ուր «իջեւանում է» Սեւիջը, կյանքի մի պահ է, ուր նա մարդկային երջանկության որոնումներում է, իսկ միայնության զգացողությունն ամրապնդում է իր դիրքերը՝ շուրջկալի մեջ առնելով նրան:



Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի խաղացանկում իր պատվավոր տեղն է զբաղեցնում 20-րդ դարի ամերիկյան նշանավոր դրամատուրգ Ջոն Պատրիկի «Տարօրինակ միսիս Սեւիջը» պիեսի բեմադրությունը՝ վաստակաշատ ռեժիսոր Հրաչյա Աշուղյանի կողմից: Ներկայացումը մարդկային տարբեր խմբերի մասին է՝ մի դեպքում պարզ, անպաճույճ, մարդկային վարք ու բարքով, մի այլ դեպքում՝ ամենակուլ, սառը բնավորությամբ, փողին գերի, շքեղ ապրելակերպով ներկայացողների: Հերոսներ, որոնք բոլորն էլ ներքաշվում են կոմիկական դրությունների մեջ, փորձում ազատվել այդ իրավիճակից եւ հասնել իրենց նպատակին: Հումոր առաջացնելու է միտված նաեւ պատրիկյան գրչին բնորոշ յուրահատուկ ծաղրալի, հեգնական գրելաոճը, որը երբեմն վերածվում է թեւավոր խոսքերի:

Սա այն եզակի դեպքերից է, երբ բեմադրիչը իր բեմադրական մտահղացումը հյուսում է դրամատուրգի առաջարկած բեմադրաձեւի վրա: Բեմարվեստի առաջնային նախապայմաններից մեկը փոխհարաբերությունների կառույցն է, խաղընկերոջ զգացումն ու նրա օգնությամբ հավաստի բեմական վարքագծով ներկայանալը: Ներկայացման մեջ, կարող ենք ասել, որ ռեժիսորը շեշտը դրել է կերպարների փոխհարաբերությունների վրա՝ առաջին պլան մղելով դերասաններին, նրանց տրամադրել է հարթակ՝ ազատորեն իրենց վարպետությամբ ներկայանալու, ուղղորդել՝ ռեժիսորական ճշգրիտ ցուցումներով:

Գործողությունները ծավալվում են «Խաղաղ մենաստան» կոչվող հանգստավայրի լուսավոր ու զուսպ կահավորված հյուրասենյակում (բեմանկարիչ՝Ս. Արուտչյան): Անմիջապես ներկայացվում է հերոսների մի խումբ, ովքեր այդ կացարանի բնակիչներ են: Նրանց ճակատագրական ընկերությունը հիմնված է կյանքի պատճառած ցավի, կրած դառնությունների վրա: Այս մարդիկ ստեղծել են մի փոքրիկ աշխարհ ու ծվարել այնտեղ: Կտրված ժամանակից, նրանք ապրում են իրենց պատկերացումներով, եւ յուրաքանչյուրն ունի ապագայից իր սպասումը: Նրանցից ամեն մեկն ունի կյանքի նկատմամբ թեթեւ, հեգնական հայացք եւ հետաքրքիր է սեփական փիլիսոփայությամբ՝ Ֆլորենսը (Ս. Հախնազարյան), Ֆերին (Ա. Քոչարյան), միսիս Պեդդին (Տ. Տեր-Մարկոսյան), Ջեֆրին (Հ. Գալոյան), Հանիբալը (Վ. Մկրտչյան) հերոսներ են, որոնցից յուրաքանչյուրը մեծ խնամք է տածում մյուսի նկատմամբ, հասկանում նրան, փայփայում, ասես, փորձում սպիացնել անցյալից մնացած հիշողությունները: Իրենց վարպետությամբ, հավաստի, համոզիչ վարքագծով են ներկայանում դերասանական կատարումները: Այստեղ հարկ է խոսել մի ամբողջ խմբի հաջողության մասին, քանզի ընդհանուր ներկայացող իրավիճակներն իրենց հավաստի իրականացումն են գտնում յուրաքանչյուրի՝ դիմացինի հետ ստեղծող շփումների հիման վրա: Դերասաններից յուրաքանչյուրը նուրբ ու մեծ քնքշությամբ է ներկայացնում իր հերոսին, փորձելով հանդիսատեսին ցույց տալ կերպարի փխրուն ներաշխարհը: Այս հերոսների կողքին են միսիս Սեւիջի ամուսնու զավակները՝ Լիլի Բելլը (Մ. Ղազարյան), Տիտուսը (Բ. Պետանյան), Սեմուելը (Ա. Հակոբյան): Սենատոր-դատավորներ, որոնց ըմբռնումը իրականության շուրջ դուրս է մենաստանի պատերից եւ կրում է լոկ հաշվարկային բնույթ:

Ներկայացման գլխավոր հերոսուհուն՝ միսիս Սեւիջին (Գալյա Նովենց) սպասում էին եւ՛ հանդիսատեսը, եւ՛ մենաստանի բնակիչները: Մուտքը նախապատրաստող տեսարանները հասնում են մինչեւ առաջին գործողության միջնամաս: Եվ հայտնվում է նա՝ աշխույժ, առույգ, հեգնանքը շուրթերին, երիտասարդական ավյունով լեցուն, իր ծագմանը արժանի շքեղ կոստյումով ու փոքրիկ արջուկը գրկին: Նրա հարաբերությունները բնակիչների հետ հետզհետե սերտանում են: Կերպարի «փիլիսոփայական արարքներից» մեկն է դառնում գորգի եզրերով քայլելու առաջարկը: Հերոսները սկսում են եզրագծով քայլքը, ինչը ցույց է տալիս նրանց՝ Սեւիջի հետ գաղափարակիր դառնալն ու արդարացի նպատակով ապրելը: Կերպարի զարգացման ընթացքում մենք տեսնում ենք սեփական երջանկությունը չգտած կնոջ, ով եկել է մարդկանց երջանկություն բաժանելու: Պատրիկյան այս հերոսուհին հավասարության կողմնակիցն է եւ նրա նպատակը մարդկանց ցանկությունը իրագործելն է: Հուզական են այն տեսարանները, որտեղ նա բժիշկ Էմմետին (Զ. Աբրահամյան), ու միսիս Վիլհելմինեին (Ռ. Գասպարյան) մեծ ցավով հայտնում է, որ Հանիբալը մեծ երաժիշտ կդառնար, եթե ժամանակին ունենար իր ջութակը, մյուսը երջանիկ կլիներ մի այլ բանով եւ այլն: Հոգեբանական բարդ մի շրջան է այս հերոսուհու կյանքում, բայց ուժեղ կամքն ու հաստատակամությունը ստիպում են գործել, պայքարել: Դերասանուհին մեծ վարպետությամբ, նուրբ գտնված նյուանսներով է բացահայտում հերոսուհու ապրումները: Խորհրդանշական է դառնում նրա պարը, որը ասես, ի հայտ է բերում մի նոր տիկնոջ՝ հաղթաթղթերը ձեռքում պահած, պատրաստ խորամանկելու: Այն բեմական ազատությունը, վստահությունը, կերպարի ապրումների այդ աստիճան հավաստի վերարտադրումը, որով ներկայանում է դերասանուհին, մեծ դպրոց է երիտասարդ թատերական սերնդի համար:

Ներկայացվող կատակերգական իրավիճակները ի վերջո իրենց դրական հանգուցալուծումն են գտնում: Իսկ ներկայացման ֆինալը ստանում է քնարական երանգ: Սեւիջ-Գալյա Նովենցի անխուսափելի մեկնումը դառնում է ընկճող: Նա թողնում է արջուկն ու իջնում բեմից՝ հանդիսատեսի շարքերով հեռանում: Հնչում են տխուր ու հեռացող երջանկության մասին պատմող ելեւէջներ: Բեմում գորգի եզրագծով գլխիկոր քայլող մենաստանի բնակիչներն են: Մի պահ հանդիսատեսն, ասես, նույնանում է հերոսների հետ, կիսում դառնության զգացումը:

Դեր, որ գտել է իր դերասանուհուն, կերպար, որ այնքան սազում է Գալյա Նովենցին, երջանկություն, որ բերում են երկուսով:

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Թատերագետ

## Տիգրան Լեւոնյանի արխիվի հանձնումը

ՀՀ մշակույթի նախարարության գրականության եւ արվեստի թանգարանի արխիվային ֆոնդերը այսօր կհարստանան եւս մեկով: Թանգարանի Կոմիտասի անվան դահլիճում հանդիսավորապես կհանձնվի հայ օպերային թատրոնի երախտավոր, տաղանդավոր արտիստ, երկար տարիների թատրոնի գեղարվեստական ղեկավար Տիգրան Լեւոնյանի արխիվը: Արվեստագետի ստեղծագործական եւ աշխատանքային կյանքն ամփոփող շուրջ 15 ստվարածավալ կաշեկազմ թղթապանակները յուրատեսակ տարեգրությունն են մեծ արվեստագետի եւ բեմի նվիրյալի գործունեության:

Արխիվը պարունակում է տարբեր տարիների գրագրություն, նամակագրություն, երաժշտական-թատերական հոդվածներ, կարծիքներ, լուսանկարներ՝ ինչպես անձնական, այնպես էլ պաշտոնական-հասարակական բնույթի. անշուշտ, նաեւ վերաբերող մեծատաղանդ երգչուհի Գոհար Գասպարյանին: Այստեղ կան նամակագրություններ, զանազան տարաբնույթ հաղորդագրություններ XX դարի երաժշտական աշխարհի հայ եւ օտար նշանավոր անձերի առնչվող, ինչի շնորհիվ այն անձնական-ընտանեկան շրջանակներից դուրս գալով՝ ներկայանում է հանրային ուշադրության՝ անհրաժեշտ ոչ միայն մասնագետ-ուսումնասիրողին, նաեւ պարզ արվեստասերին: Մանավանդ որ արխիվը գիտական մշակման է ենթարկվել, համակարգվել եւ թվայնացվել՝ մատչելի եւ հասու դառնալով ինտերնետային որեւէ սպառողի. նախագծի իրականացնողն է պետական մրցանակի դափնեկիր Խաչիկ Շառոյանը:

Արխիվը հավաքել-ամփոփելու նախաձեռնողն ու իրականացնողն է արվեստագետի եղբայրը՝ Երեւանի Հր. Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Խանդիկյանը, որը նվիրատվությամբ այն կհանձնի թանգարանին ի պահ:

Ապա Տիգրան Լեւոնյան մտավորականին, արտիստին կներկայացնեն Նորայր Ադալյանը, Լեւոն Մութաֆյանը, Երվանդ Ղազանչյանը, Արմեն Խանդիկյանը: Մ. Բ.

# Էլինա Դանիելյանը շարունակեց հաղթարշավը

Կազանում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի 4-րդ փուլի մրցաշարում պարզապես հիանալի խաղ է ցուցադրում Էլինա Դանիելյանը՝ վստահ հաղթանակներ տոնելով մրցակցուհիների նկատմամբ: 8-րդ տուրում Դանիելյանը սպիտակներով պարտության մատնեց Կատերինա Լահնոյին եւ վաստակելով 6 միավոր, շարունակեց միանձնյա գլխավորել մրցաշարային աղյուսակը:



Նրան կրնկակոխ հետապնդում է Սլովենիան ներկայացնող Աննա Մուզիչուկը, որի համար եւս 8-րդ տուրը հաղթական էր: Աննան առավելության հասավ մրցաշարի հետնապահներից մեկի՝ Ալիսա Գալլյամովայի նկատմամբ ու վաստակեց 5,5 միավոր: 5-ական միավորով 3-4-րդ տեղերն են բաժանում Համպի Կոնեռուն եւ Վիկտորիա Չմիլիտեն: Կոնեռուն հաղթեց աշխարհի նախկին չեմպիոնուհի Անտուանետա Ստեֆանովային, իսկ Չմիլիտեն հաշտություն կնքեց Տատյանա Կոսինցեւայի հետ:

Աստիճանաբար մրցաշարային վիճակը բարելավում է աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը, որը հաղթելով Ալեքսանդրա Կոստենյուկին, վաստակեց 4,5 միավոր ու Լահնոյի հետ բաժանում է 5-6-րդ տեղերը: Մրցաշարային աղյուսակը 1,5 միավորով եզրափակում է թուրք Բեթուլ Յիլդիզը, որը հաշտություն կնքեց Նադեժդա Կոսինցեւայի հետ:

Մրցաշարի ավարտին մնացել է 3 տուր: Այսօր կայանալիք 9-րդ տուրում Էլինա Դանիելյանը սեւերով կմրցի 3,5 միավոր ունեցող Ալեքսանդրա Կոստենյուկի հետ: Հաջորդ տուրում Էլինայի մրցակցուհին կլինի 2 միավորով նախավերջին տեղում ընթացող Ալիսա Գալլյամովան: Իսկ մրցաշարը Դանիելյանը կավարտի աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանի հետ մրցավեճով, որն էլ կարծում ենք, վճռորոշ կլինի 1-ին տեղի համար մղվող պայքարում:

# Բիլիչը հեռացավ, իսկ Պրանդելին կշարունակի աշխատանքն անկախ Եվրո-2012-ի արդյունքից

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի եւս 2 մասնակիցներ: Խմբային մրցաշարի արգելքը հաջողությամբ հաղթահարեցին եւ հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին Իսպանիայի եւ Իտալիայի հավաքականները:



Ավարտական տուրից առաջ C խմբում բավականին խճճված իրավիճակ էր ստեղծվել: Իսպանիայի եւ Խորվաթիայի հավաքականներն ունեին 4-ական միավոր, իտալացիները վաստակել էին 2 միավոր, իսկ իռլանդացիները միավոր չունեին: Շատերն այն կարծիքին էին, որ Իսպանիայի եւ Խորվաթիայի հավաքականները հավանաբար կպայմանավորվեն ու ոչ-ոքի կխաղան, ինչը զգալիորեն կբարդացներ իտալացիների ուղեգիր նվաճելու խնդիրը: Բարեբախտաբար մրցակիցները գործարքի մեջ չմտան եւ ազնիվ մրցակցություն ծավալվեց, որի ելքը վճռեց խաղավարտից 2 րոպե առաջ իսպանացի Նավասի խփած միակ գոլը: Իսպանացիների հետ հանդիպումը Խորվաթիայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում Սլավեն Բիլիչի վերջին խաղն էր:

Մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Վիսենտե Դել Բոսկե** (Իսպանիա)-Դժվարին հաղթանակ տոնեցինք: Խորվաթների համար էլ դժվար էր: Նրանք հիանալի խաղացին. լավ պաշտպանվեցին ու սուր հակագրոհներ կազմակերպեցին: Սակայն խաղավերջում ավելացրինք ճնշումն ու հաղթեցինք: Մենք պայքարում էինք հաղթանակի համար, քանի որ ոչ-ոքիի վրա խաղալը վտանգավոր էր: Այսօր մենք մեծ քայլ կատարեցինք՝ մտնելով քառորդ եզրափակիչ: Այդ փուլում նախընտրելի մրցակից չունենք: Հարկավոր է պատրաստ լինել յուրաքանչյուր մրցակցի հետ պայքարին:

**Սլավեն Բիլիչ** (Խորվաթիա)-Ինձ մնում է շնորհավորել իսպանացիներին: Իսկ իմ ֆուտբոլիստներին ասացի, որ հերոսներ են: Նրանք լիովին կատարեցին առաջադրանքը: Գիտեինք, որ շատ դժվար է լինելու իսպանացիներին հսկելը, բայց նաեւ վստահ էինք, որ 2-3 գոլային պահ կստեղծենք: Ցավոք, չկարողացանք գոլ խփել: Չնայած պարտությանը, հպարտանում եմ իմ թիմով, որը շատ բարդ խմբում հիանալի ելույթներ ունեցավ:

Իտալացիները հաջորդ փուլի ուղեգրի հարցը հաջողությամբ լուծեցին շնորհիվ իռլանդացիների դարպասը Անտոնիո Կասանոյի եւ Մարիո Բալոտելլիի խփած 2 անպատասխան գոլերի:

Մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Չեզարե Պրանդելի** (Իտալիա)-Շատ երջանիկ եմ: Դա շատ բարդ խաղ էր: Մեզ դիմակայում էր շատ ուժեղ թիմ իր հիանալի երկրպագուներով: Մենք արժանի էինք ուղեգրին: Այժմ հարկավոր է քառորդ եզրափակիչում էլ խաղալ նույնպիսի եռանդով ու նվիրվածությամբ:

**Ջովանի Տրապատոնի** (Իռլանդիա)-Ցավոք ամեն ինչ վճռեցին ստանդարտ դրությունների ժամանակ մեր թույլ տված 2 սխալները: Առաջին կես ժամում մենք շատ լավ ու կազմակերպված էինք խաղում: Սակայն առաջին գոլն ամեն ինչ խառնեց: Ամեն դեպքում գոհ եմ թիմի դրսեւորած ոգուց: Թեկուզ Իտալիան հաղթեց, մենք այս խաղում պայքարեցինք մեր պատվի համար:

Ի դեպ, խաղից հետո Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ջանկառլո Աբետեն հայտարարել է, որ հավաքականի գլխավոր մարզիչ Չեզարե Պրանդելին կմնա իր պաշտոնում անկախ Եվրոպայի առաջնությունում ցույց տված վերջնական արդյունքից:

# Բատիստան վերջապես աշխատանք գտավ

Արգենտինացի մարզիչ Սերխիո Բատիստան գրեթե մեկամյա գործազրկությունից հետո վերջապես կրկին աշխատանք գտավ: Նա կգլխավորի չինական «Շանհայ Շենհուա» ակումբը՝ փոխարինելով ֆրանսիացի հանրահայտ հարձակվող Նիկոլյա Անելկային: Վերջինս «Չելսիից» տեղափոխվելով Չինաստան, գլխավոր մարզչի պարտավորություններն էր կատարում Ժան Տիգանայի պաշտոնանկությունից հետո:

Այժմ Նիկոլյա Անելկան կրկին կարող է խաղադաշտ դուրս գալ՝ կատարելով պայմանագրով նախատեսված իր անմիջական պարտականությունները: Չինական թիմում Անելկան տարեկան 13 մլն եվրո աշխատավարձ է ստանում:

Ինչ վերաբերում է Սերխիո Բատիստային, ապա նա նախկինում Արգենտինայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչն էր: Նա հավաքականի ղեկը ստանձնել էր 2010-ի նոյեմբերի 2-ին: Իսկ Ամերիկայի գավաթի խաղարկությունում անհաջող ելույթների համար Բատիստան 2011-ի հուլիսին պաշտոնանկ էր արվել:

## ՏԱԼԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

# Արոնյանը նպաստեց Կառլսենի հաջողությանը

Մոսկվայում վերջնագիծը հատեց Միխայիլ Տալի 7-րդ հուշամրցաշարը: Ավարտական տուրից առաջ մրցաշարում բավականին հետաքրքրական իրավիճակ էր ստեղծվել: Շատերի համար անսպասելի աղյուսակը 5 միավորով գլխավորում էր իտալացի Ֆաբիանո Կարուանան, 4,5-ական միավորով նրան հետապնդում էին Թեյմուր Ռաջաբովն ու Մագնուս Կառլսենը:

9-րդ տուրում Կարուանան սեւերով խաղում էր Լեւոն Արոնյանի հետ, որն արդեն կորցրել էր գլխավոր մրցանակին տիրելու հնարավորությունը: Սակայն Լեւոնը մարտականորեն էր տրամադրված եւ հաղթելով Կարուանային, օգնեց Մագնուս Կառլսենին շահելու 1-ին մրցանակը: Կառլսենը սեւերով պարտության մատնեց անգլիացի Լյուկ Մակշեյնին ու վաստակելով 5,5 միավոր, շրջանցեց Կարուանային: Նորվեգացի գրոսմայստերը կպարգեւատրվի 30 հազար եվրոյով: Լեւոն Արոնյանը 4,5 միավորով Ալեքսանդր Մորոզեւիչի, Ալեքսանդր Գրիշչուկի եւ Վլադիմիր Կրամնիկի հետ բաժանեց 4-7-րդ տեղերը ու արժանացավ 7 հազար եվրո պարգեւավճարի:

Թեյմուր Ռաջաբովը ոչ-ոքի խաղաց Հիկարու Նակամուրայի հետ եւ Ֆաբիանո Կարուանայի հետ 5 միավորով բաժանեց 2-3-րդ տեղերը: Նրանցից յուրաքանչյուրը կստանա 17,5 հազար եվրո: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Տոմաշեւսկի-Գրիշչուկ, Կրամնիկ-Մորոզեւիչ պարտիաները: Նակամուրան ու Մակշեյնը 4-ական միավորով բաժանեցին 8-9-րդ տեղերը, իսկ Եվգենի Տոմաշեւսկին 3,5 միավորով եզրափակեց աղյուսակը: Նա բոլորից քիչ՝ 1500 եվրո պարգեւավճար կստանա:

# Առաջատարները բաժանվեցին խաղաղությամբ

Կարեն Ասրյանի հուշամրցաշարի 3-րդ տուրում ուշադրության կենտրոնում 4 առաջատարների միջեւ կայացած հանդիպումներն էին: Դավիթ Լոմսաձեն ու Դավիթ Պետրոսյանը հաշտություն կնքեցին: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Սուրեն Պողոսյանի եւ Դավիթ Շահինյանի պարտիան:

Դա հնարավորություն տվեց 7 շախմատիստների՝ Դավիթ Քալաշյանին, Տիգրան Քոթանջյանին, Ավետիք Գրիգորյանին, Հրանտ Մելքումյանին, Լեւոն Բաբուջյանին, Դավիթ Հարությունյանին եւ Հրայր Սիմոնյանին 2,5 միավորով հավասարվելու առաջատար քառյակին:

Առաջին պարտությունը կրեց Լիլիթ Մկրտչյանը՝ զիջելով Հրանտ Մելքումյանին: Տուրը հաջող էր Արտաշես Մինասյանի համար, որը հաղթեց Տիգրան Գասպարյանին: Եվգենիա Դոլուխանովան էլ վերջապես ճաշակեց հաղթանակի քաղցրությունը՝ պարտության մատնելով Հայկ Մուշեղյանին: 2 անընդմեջ պարտություններից հետո առաջին միավորը վաստակեց մրցաշարի ամենատարեց մասնակից Էդուարդ Մնացականյանը՝ հաղթելով Վլադիմիր Կանջարյանին:

# Մխիթարյանի 3-րդ անընդմեջ հաղթանակը

Չեխիայի Տեպլիցե քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 3-րդ տուրն էլ հաղթական էր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանի համար, որը սպիտակներով հաղթեց Բորիս Ֆուրմանին: 3-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին նաեւ 11 շախմատիստներ, որոնք էլ Մխիթարյանի հետ 3 միավորով գլխավորում են աղյուսակը:

# Հրայր Մկոյանը վերադարձավ «Շիրակ»

Ինչպես տեղեկացանք Գյումրիի «Շիրակի» պաշտոնական կայքից, Հայաստանի ազգային հավաքականի կենտրոնական պաշտպան Հրայր Մկոյանը 6 ամսվա պայմանագիր է կնքել իր նախկին թիմի հետ: Այնպես որ 5-ամյա ընդմիջումից հետո Մկոյանը կրկին կկրի հարազատ «Շիրակի» մարզաշապիկը:



Մկոյանը ֆուտբոլային կարիերան սկսել է հենց «Շիրակում», այնուհետեւ ելույթները շարունակել է «Արարատում», «Ուլիսում» եւ «Միկայում»: Այս տարվա հունվարին Մկոյանը վարձավճարով տեղափոխվեց Նալչիկի «Սպարտակ», սակայն թիմի մարզիչներն այդպես էլ հայ ֆուտբոլիստին իրեն դրսեւորելու հնարավորություն չտվեցին: «Սպարտակը» դուրս մնաց Ռուսաստանի պրեմիեր լիգայից, իսկ Մկոյանը նախնական պայմանավորվածության համաձայն ազատ ֆուտբոլիստի կարգավիճակ ստացավ:

Որոշ ժամանակ Մկոյանը նոր թիմ էր փնտրում՝ սպասելով հարմար առաջարկների: Եվ ահա նա որոշեց վերադառնալ հարազատ կոլեկտիվ, որը պատրաստվում է Եվրոպայի լիգայի մրցաշարին: Ինչ խոսք, փորձառու Մկոյանը զգալիորեն կուժեղացնի «Շիրակի» պաշտպանական օղակը:

# Վարուժան Հակոբյանը գրավեց 5-րդ տեղը

Լաս Վեգասում անցկացված շախմատի փառատոնում Վարուժան Հակոբյանը 6 հնարավորից վաստակած 4,5 միավորով 92 շախմատիստների մեջ գրավեց 5-րդ տեղը: Վարուժանը հաղթեց Դիպրո Չակրաբորտիին, Լուկ Վելոտիին, Տիմոտի Թեյլորին ու Սթիվեն Զիերկին, ոչ-ոքի խաղաց Ֆրանչեսկա Ֆոյսորի հետ: Միակ պարտությունը նա կրեց Դանիել Բրիանտից:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց գրոսմայստեր Ալեքսանդր Լենդերմանը, որը 6 հնարավորից վաստակեց 5,5 միավոր: Հաղթողից կես միավորով հետ մնացին Թիմուր Գարեեւը, Միխեիլ Կեկելիձեն եւ Էնրիկո Սեւիլիանոն: Մրցաշարին մասնակցած հայազգի մյուս շախմատիստը՝ Լեւոն Ալթունյանը 3,5 միավորով զբաղեցրեց 29-րդ տեղը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

